

„Droschak“

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL

„Droschak“

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՀԱԿԱՀԱՐԻԱԾԸ

Մի քանի ամիս առաջ էր միայն, երբ բոսնիացիների ներկայ շառաւիղը, նախկին Դուվայի անսպասելի հարձակումներից շնորհիվ, երկրորդ խաղաղացնելու և իր գահը անսասան պահելու միակ միջոցը համարեց՝ Տարիկեան պալատի դռները գոցող հռչակաւոր ու կազմը ստորագրել:

Խնդրութեան մի ժպիտ անցաւ բոլոր „հայրենասէրների“ դէմքով: Պոլսաստանը փրկւած է, գոչեցին նրանք:

Դուվայի անդամները դուրս չպրտւեցան որպէս հայրենիքի դաւաճաններ և քշեցան այս ու այն կողմ՝ պատմելու ռուս ժողովրդին այն ընդունելութիւնը, որ նրանք գտան ցարից—մոլոտիկի փոքր աստած ու ց—և զգացնել տալու ամենուրեք այն հարածը, որ այնչափ բրտորէն հասաւ տանջող Պոլսաստանին: Դարերի մթութեան քողով շղարշած գիւղացու ուղեղը ցնցւեց և նա զգաց իրեն դէմ յանդիման մի ախտաւոր թշնամու. արմատացած նախապաշարուած վայրկենապէս օգը ցնդւեց այդ կոպիտ ապտակից, որ գալիս էր մի օրում Պոլսաստանի ժողովուրդների մէջ ազատութեան տենչը հրահրելու աւելի քան այդ կաւարող էր անել յեղափոխական պրօպագանդը տարիների ընթացքում: Դա մի զօրեղ սթափեցուցիչ դեղ էր ռուս ամբոխի համար՝ իր չարն ու բարին ճանաչելու գործում:

Եւ նա ճանաչեց...

Բոլոր ձախակողմեանները զսպւած լաւագոյն Դուվա ունենալու հեռանկարով տարան այդ հարածը լուռ ու մունջ... և գործեցին:

Անբացատրելի լուռութիւնը յեղափոխական Պոլսաստանի կողմից էլ աւելի քաջալերեց նիկօլային, և նա յաղթանակը տարած կարծելով՝ լարեց իր ամբողջ գաւադիր կազմը—հրաւեր կարդաց „հարազատ զաւակներին“ համախմբել իր շուրջը սրբազան հայրենիքի վերածնութեան համար:

Եւ նրանք համախմբւեցին... ու ցրւեցին դէպի գաւառները, դէպի ընդարձակ Պոլսաստանի մութ անկիւնները՝ համոզելու ամենքին անխտիր՝ առաջիկայ Դուվայի համար ընտրել պատգամաւորներ, կամակա-

տար ու հաճոյակատար—պօպեր ու տիրացուներ, պաշտօնից վնդրւած չինօֆիկներ և ամեն կարգի երկոտանիներ, բայց ոչ երբեք մարդիկ:

Պայքարն ուժեղ էր և անօրինակելի. մի կողմն էին բոլոր մութ տարրերը—խուլի գաննեւրը—պաշտօնեաներ, յայտնի ու գաղտնի ոստիկաններ, օրթօգոքս եկեղեցու „օրթօգոքս“ սպասաւորներ, „հաւատարիմ“ զինւորներ, հպարտ ու ինքնահաւան, հրամայող ու սաստող, սելիների և կնուտի երկրպագուները: Միւս կողմն էին նորաբողոք ծիլերը—յեղափոխականները—բժիշկներ ու փաստաբաններ, ուսանողներ ու ուսուցիչներ, գրագէտներ ու հրապարակախօսներ և նախկին Դուվայից բշտած „անարժաններ“, համեստ ու հեղահամբոյր, խրախուսող ու յուսադրող, ազատութեան ու եղբայրութեան ջահը ձեռքերին:

Եւ ռուս մոլոտիկը լսեց երկուսին էլ իր սովորական և դարաւոր համբերութեամբ. լսեց ու խորհեց. և նրա խոհերը շատ էին խորհրդաւոր... բայց նա մոռացաւ արգելք այն ապտակը, որ մինչև նրա ոգու խորքն էր թափանցել: Ժողովուրդը յարմար առիթի էր սպասում իր քւէն տալու:

Հրճեց մի բոպէ ցարը, որ ժողովուրդը լուռ է, ուրեմն և համաձայն իր նշանակածներին ընտրելու: Ծափ զարկեց նա իր պալատում: Մի՞թէ ժողովուրդը, և այն էլ ռուս տգէտ ու կոպիտ գիւղացին, կարող է այնչափ յիշատար լինել՝ ամիսներ առաջ իրեն հասած ապտակը չը մոռանալու աստիճան, օ՛, նա այդչափ զգայուն չէ: Եւ ցարը երազեց մի բոպէ. ահա նոր Դուվա գումարած ցանկացած խրտուկակներից, որոնք ամեն օրէնք կը մշակեն, ամեն ծրագիր կառաջարկեն ուղիղ այնպէս, ինչպէս ինքն է հրամայում, կամ աւելի ճիշտ, ինչպէս Ստօլիպինն է թելագործում հրամայել. և ահա եւրոպական բանկերի դռները բաց են ռուսական փոխառութիւնների համար. եւրոպայի գանձը իր ետեւն ունենալուն պէս այլ ևս յեղափոխական շարժում գոյութիւն չունի. բանտ ու արքոր, գնդակ ու կախաղան—ահա միջոցները, որոնցով նա մի քանի օրում վերացնում է „չարիքը“ և սկսւում է իր Թագաւորութեան մի փառաւոր շրջան, նման իր հօր, Ալէքսանդր Գ.ի տիրապետութեան ամենահպատակ շրջանին, երբ իր մի խօսքը բաւական է դողացնելու հարիւր յիսուն

միլիոննոց ազգաբնակչութիւնը, մի հրամանը՝ լռեցնելու ռուսական ամբողջ ըմբոստացումը և մի ուկրաինացի արիւն-նով խեղդելու ամեն ինչ և հոգ ու ազատութիւն «զառանցանքները»։ Բոմանովների ընտանիքը միշտ տէր ու ինքնակալ, նրա սատրապները մի-մի լիա-զօրներ կոչված, ինչպէս ռուսական, Ինչպէս ռուսական, Ինչպէս ռուսական... Ինքնակալ Ռուսաստանի նախկին գոռոզ ու անասան հմայքը վերականգնեցան՝ սաւառնում է ոչ միայն իր ընդարձակ սահմանների մէջ պարփակող հարկաւոր ազգերի ու լեզուների վրայ, այլ և դէնը, հեռու, սահ-մաններից շատ հեռու, դէպի Բալկան, Փոքր-Ասիա, Պարսկաստան, Հնդկաստան, Չինաստան...

Եւ այդ քաղցր երազների մէջ իրար ետեւից հաս-նում են հեռագիրները — գաւառներից թռչող բռնակցի մէկը միւսից գուժական, մէկը միւսից յուսահատ։ Ժողովրդի սե քեզներն են դրանք՝ կառավարական թեկ-նածուկներն։

Ո՛րպիսի յուսահատութիւն։

Երկրորդ գլուխում հնչող ցասկոտ յարձակումները բերօքրատիայի դէմ խլացնում են ցարի ակնջները. այնտեղ յրաւ ըստ իրենց պահանջները կոչմանի պէս ցցած են նրա երեւոյթութեան մէջ։ Բազմամիլիոն ժողովրդի միահամուռ ապստան է դա, որ իբրեւ հա-կահարած իջնում է նիկոլայի երեսին, և գլուխը կորցրած նրա թափից, մի նոր ուկազ է մրմնջում նա...

Բայց ո՛րպիսի ուկազ. որոշելը դժւար է։ Կրկին ժողովրդին դիմել։ Նրան ապաւինել այլևս ուշ է։ Ո՛ւմ դիմել սերներին։ Ունի՞ արդեօք այդչափ վստահու-թիւն։ Ի՞նչ են պատմում կրօնաւորներն ու Սեպտուպօլը. մտքի խմորումը յուսադիր տեղ թողնել է այլևս ցարի տատանումներին։

Եւ նա ապուշ կտրած նախազգում է, որ նոյնիսկ սերներ-ը՝ անտառի խառնութեամբ սեւացած Պետերբուրգի շուր-ջը՝ լուռ հանդիսատեսի դեր են կատարելու, երբ ռու-սական մեծ յեղափոխութեան ուժեղ հոսանքը մօտ ապագայում, և նա հեռու չէ, պիտի գայ խոր-տակելու ցարերի ամենակուլ Բաստիլը։

Մ Ի Փ Ա Ս Տ Ե Ի Ս

Ներկայ փաստաթուղթը, գրւած Գեորգի Գործերի միջիստ Սոցիալիստի կողմից Հայոց Կարգիկոսին, իսկաւ ԼԵՐ „Իրօսակի“ ընթերցողներին, որպէս մի յայտնի ակն ռուս կառավարութեան բռնակալութեան, որ մի անգամ էս գալիս է քիչու ցարական այն մանիֆէստը, որով կա-ռավարական պատգամներն ձեռնով հայ հոգեւորականների ախոր-ւիլը բարձրած էր համարում։

ՆԵՐՔԵՆ ԳՈՐԾԵՐԻ

ՄԻՆԻՍՏՐ

№ 4271

21 օգոստոս, 1906

Պետերբուրգ

Չերք Սրբութիւն Ողորմած Հովաքան,

Ի հետեւում թէօգոսիայի ժամանակաւոր գննե-րաւ նահանգապետի յարուցած միջնորդութեան,

„յետս կոչելու և հեռացնելու պաշտօնավարութիւ-նից Թէօգոսիայի Հայ-Լուսաւորչական եկեղեցիների երէց Ներսէս քահանայ Հերթեցեանին, նորա չա-փազանց փաստակար ուղղութեան և գործունէու-թեան համար, որ առաջացրել էր քաղաքի Հայ-ապագանակութեան մէջ յուզումն, որ և տարածել էր տեղական զինւորական բանակի մէջ, Էջմիածնի Սինօգը կարգադրել էր յիշեալ քահանայի մասին, հեռացնել նրան պաշտօնավարութիւնից՝ արգելե-լով իւր գետի վրայ եղած Նախիջևան քաղաքի ս. Խաչ վանքում։ Սակայն Չերք Սրբութեան հեռա-գրի համաձայն Հերթեցեան Ներսէսը վերադար-ձած է Թէօգոսիա։

Ի նկատի առնելով, որ Էջմիածնի Հայ-Լուսա-ւորչական Սինօգը, որի պարտականութիւնն է հըս-կել իրեն ենթարկող պաշտօնակատար անձանց որոշումները, յիշեալ քահանային աքսորելը կատարել է ուղիղ տիրող օրինաց համաձայն, (տես յօդւածներ 1141 և 1146 օտար դաւանութեանց կանոնագրքի), ես անհրաժեշտ եմ համարում Չերք Սրբութեան ուշադրութիւնը հրաւիրելու այն բանի վրայ, որ Չերք կարգադրութիւնը վերոյիշեալ հոգեւորականի վերադարձի համար — դէպի այնտեղ, որ նրա մուտ գործելը կառավարութեան կողմից փաստակար է ճանաչւած, չի կարող լինել Պետական շահերին համապատասխան. որովհետեւ նա կը ստեղծէ կառավարութեան համար մի դժւար կացութիւն կուսակցութեան երևան եկած յեղափոխական շարժման դէմ։

Յանձնելով ինձ Չերք Հովաքանական աղօթից, ունիմ շնորհ լինելու Չերք Սրբութեան Ծառա՝

Պ. ՍՏՕԼԻՊԻՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ս Պ Ո Ւ Ր Ա Կ Ա Ն Է Ն

ՎԱՆ, 26 դեկտեմբեր 1906

Մեր օրւան կեանքին մէջ իբր աչքի զարնող նորու-թիւն վանի կուսակալին պաշտօնակալութիւնն է։ Ինք՝ վալին բնիկ ալպանացի ծերունի մըն էր, որ բաւական տարիներ վարեց վանի կուսակալութիւնը, ձգելով պատւաւոր և շիտակ մարդու համբաւ։ Տաճկաստանի և մասնաւորապէս հայկական գաւառներուն մէջ թիւք կառավարիչները պէտք է բաժնել իրկու դասակարգի, որոնք նպատակի՝ այսինքն հայ տարրը իր բնաշխարհին մէջ որչափ կարելի է տկարացնելու գործին մէջ հա-մակարծիք են, բայց ուղղութեան, աւելի ճիշդ, այս նը-պատակին հասնելու տակտիքայի մէջ կը տարբերին։ Մի մասը, որ մեծամասնութիւն կը կազմէ, գաղանա-յին բնազդներով օժտւած, պրոֆօկատոր, վերէն իբր կարգաւոր ստացած — ճնշել հայ տարրը — երբեք զա-նազանութիւն չի դնել միջոցներու մէջ այս նպատա-կին հասնելու, երկրորդ մասը՝ աւելի նրբամիտ, սոցոս-կուն, քաղաքագետ, բառի թրքական իմաստով, մի-ջոցներու մէջ կը զգուշանայ աղմկայով դէպքեր ստեղ-ծել և արկնաբամ կ'ընէ ժողովուրդը առանց ցըն-

ցումիս Այս երկրորդ դասակարգին կը պատկանէր մեր նախորդ վալին, որ իր պաշտօնավարութեան միջոցին ընկճեց Վասպուրականի ժողովուրդը հարկերու ծանրութեան տակ, հոգեհոգի ըրաւ արեւստակեալ սովերով և ստիպեց շատերը գաղթել դէպի օտարութիւն, միշտ աշխատելով ամեն ինչ սուս-փուս կատարել, որպէսզի որեւէ ճիշդ աղաղակ չը բարձրանայ: Անոր այդ ձեւի գործելակերպը առիթ տուաւ իր թշնամի պաշտօնեաներուն տարածել թէ անիկայ աշք կը գոցէ հայ յեղափոխականներու բայքերուն: Իսկ անգին առաջին դասակարգի պատկանող հրէշ մը՝ Բիթլիսի վալին Ֆէրիդ բէյ, որ անձնական հակառակորդն էր վանայ վալին, անոր դէմ միշտ դաւեր կը լարէր, ներկայացնելով զայն իբր մեղմ, թող և մինչև իսկ հայասէր մէկը: Եւ կառավարութիւնը վերջապէս բաւական համարեց այդ ամբաստանութիւնը զայն պաշտօնանկ ընելու համար, որովհետեւ Երզրզի հրէշը չի բաւականանար միշտ արիւնը ներս վազող, անձիջ մահացումներով, պէտք է երբեմն, եթէ ոչ յաճախ, արեան հոտը առնէ և գալարուող հոգեվարքի աղաղակները հասնին իր ականջին: Պաշտօնանկ վալին տեղ նշանակած են Ալի բէյ անուով մէկը, որ դեռ ևս չեկաւ. տեսնենք որ դպրոցին կը պատկանի մեր նոր վալին:

ԹԻԻՐԻ ՇԱՐԺՈՒՄԻՆՆԵՐԸ

ԿԱՐԻՆ, 3 յուլիս

Ձգիտենք ո՛ւր պիտի յանգի կառավարութեան դէմ մօտ տարիէ մ'իջեր սկսած թիւրքական շարժումը: Սուլթան Ազիզի գահակալութեան ընթացքում և Համիդեան շրջանի սկիզբները թիւրքոյ մէջ պատահած են մասնակի գեղեցիկութիւններ տեղական պաշտօնեաներու դէմ: Շատ անգամ այսպիսի գեղեցիկութիւններ արտայայտած են մազպաթաներով, Պոլիս ուղարկած հեռագիրներով և մինչև իսկ յայտնի կամ գաղտնի պատւիրակութիւններով: Բայց մօտ 10-15 տարիներէ ի վեր Համիդեան ըէֆէմը այնպիսի խստութիւն մը ստացած էր, որ ամեն մի խուլ գեղեցիկութիւն անգամ իր սաղմին մէջ կը խեղդէր: Մինչդեռ այստեղի շարժումը շատ մը կողմերով յատկանշական և իր խորութեամբ և տեւողութեամբ բուրգով կը տարբերի միւսներէն: Շատ անգամ պատահած է, որ թիւրք կառավարիչներու և տեղւոյն աղդեցիկ թիւրքերու մէջ պայքարներ սկսած են. տեղի են ունեցեր ժողովրդական յուզումներ և վերջացած, վաղ կամ ուշ, կառավարիչներու փոփոխութեամբ: Բայց չենք յիշեր, որ թիւրք ժողովուրդի գեղեցիկութիւնը անհատեն փոխադրէր իրերու գրութեան դէմ, խնդրագրեր ուղարկելու խաղաղ միջոցին փոխարէն տեղի ունենար հեռագրատան բռնի գրաւումը և Երզրզի գաղանին պահանջ դրելը՝ իր արարածը ետ կանչելու համար, մի քանի պօլիցիականներու լինելով և, որ ամենէն տարօրինակն է, շարժումի անընդհատ տեւականութիւնը և թիւրք տարրի հետզհետէ կազմակերպւելը: Ահա քանի մը վերջին փաստեր:

Գիշերային գաղտնի հաւաքումներն անպակաս են: Հոն են կօմիտէի բոլոր կարող անդամները: Կը խօսին, կը վիճին և որոշումներ կուտան սկսած պայքարը

յաջող ու արդիւնաւոր վախճանի մը հասցնելու նպատակով: Իսկ կառավարութիւնը կասկած չ'կայ որ իր կողմէն կ'աշխատի. լաւ կը հասկնայ, որ իր կացութիւնն այնքան դիւրին չէ: Լուր կը շրջի թէ շարժման մի քանի պետերը բռնելու և աքսորելու վճռական ու անդառնալի հրաման հասած է. իսկ կառավարութիւնը կը վարանի, կը տատանի և կ'երևի յարմար առաջին առիթն կը սպասէ հրամանը գործադրելու: Մինչդեռ անգին թիւրք երիտասարդութիւնը չվհատիր, չը քաշւիր մինչև իսկ պաշտպանողական միջոցներու դիմելէ: Հապճեպով կը զինւի և կը սպասէ որ կառավարութիւնը աքսորի հրամանին գործադրութեան սկսի, որպէսզի ցոյց տայ միանգամ ևս իր վճռականութեան փաստը:

Մի քանի երիտասարդներ ստիպած են վալին, որ իրենց յայտնէ անունները այն անձնաւորութիւններուն որոնց մասին քաղաքէն աքսորելու հրամանը հասած է. բայց վալին ուրացեր է այսպիսի հրամանի մը գոյութիւնը: Մինչդեռ քանի մը օր վերջ փորձեր է հրաւերի բողի տակ ձերբակալել շարժման քանի մը գլխաւորները: Իսկ այս մեքենայութիւնը հասկնալով՝ մարդիկ մերժեցին ներկայանալ և այսպէս ազատ մնացին. այս դաւը աւելի զայրացուց շարժման մասնակցող երիտասարդութիւնը, որ սպառնացեր է վալին, թէ եթէ անգամ մը ևս փորձէ այս խաղերը, չարաչար կը սպանեն զինք:

Միւս կողմէն հայ-թիւրքական յարաբերութիւնները կը շարունակեն մնալ շատ սիրալիր: Կառավարութիւնը չի դադրիր աշխատելէ շարժման բնոյթը փոխելու և խնդիրը հաշկական ցոյց տալու: Զանազան դաւերով և տարաձայնութիւններով կ'ուզէ պառակտումի սերմեր ցանել և հետզհետէ մտերմական դարձող համերաշխութիւնը թունաւորել: Յոյս ունինք, որ չը պիտի յաջողի:

Վերջապէս չգիտենք ո՛ւր է յանգելու ներկայ լարւած գրութիւնը: Դժգոհը այս անգամ Հայը, Մակեդոնացին կամ Արաբը չէ, այլ թիւրք տարրը: Դժգոհութիւնը վաղանցուկ չէ, այլ տեղական. ոչ սահմանափակ, այլ ընդլայնւող. վերջապէս վալիի կամ պաշտօնեայի մը դէմ հակառակութիւն չէ այս, այլ ներկայ ըէֆէմին դէմ՝ ըմբաստացում՝ յամառ, բուռն և կազմակերպւած:

15 յուլիս

Քաղաքը տակաւին հանդարտ կերպարանք ունի. բայց ներկայ վիճակի շարունակութեան վրայ կասկածելու լուրջ պատճառներն անպակաս են: Առաջինը՝ նոյն ինքը կառավարութեան անորակելի ընթացքն է: Ամէն կերպ կ'աշխատի երկու ազգերը իրարու հետ թշնամացնելու, որպէսզի իր շարագործ միջամտութեան գուռ մը բացւի: Ցաւալի է, որ եթէ ոչ քաղաքի գէթ գիւղերու մէջ մասամբ յաջողեցաւ: Մուսուրկա գիւղին մէջ (Էրզրումէն 2 ժամ հեռու) ընդհարում մը տեղի ունեցաւ հայերու և թիւրքերու միջև, որու հետեւանքով հայերէն սպանւած են երկու և վիրաւորւած 8 — 9 հոգի: Ընդհարման պատճառը հետեւեալն է: Սողուկ-Ջերմուկցի և Թուանճի թիւրքեր ընկերացած Մուսուրկացի թիւրքերու հետ իրիկնապահուն կը դեգերին աղբիւրին մօտ, ուր գիւղի կիներն և աղջիկները միշտ կուգան ջուր տանելու: Թիւրքերու նպատակն է

ղած է աղջիկ մը առեւանգելը Այս բանն իմանալով՝ հայ երիտասարդները կը հասնին աղբւրի մօտ և քաղաքավարութեամբ կը մօտենան թիւրքերուն և կը խնդրեն որ հեռանան՝ քանի որ «նամէհրամ» ի յատուկ տեղ մըն է։ Այս փոքր դիտողութիւնը բաւական կը լինի թիւրքերու զայրոյթի պայթելուն. անմիջապէս կը գիմեն զէնքի և գիտապաստ կը սպանեն երիտասարդ մը. մահացու հարած մը կուտան միւսին, որ երկու օր վերջ մեռաւ. սաստիկ կը գանակոծեն շատերը։ Բարեբաղդաբար գիւղին մէջ կը գտնւին հարկահաւաք ոստիկաններ, որոնք դէպքին վայրը կը փութան և եղելութիւնը տեղին վրայ քննելով՝ հայերուն անմեղութիւնը կը հաստատեն և քաղաք հասնելուն այն մտքով տեղեկագիր կուտան կառավարութեան, որը սակայն, հակառակ պաշտօնական տեղեկագրի, բանտարկեց վիրաւորած հայերը, սպառնալով նաև կոտորել, ջարդել բոլոր հայերը։

Ղարարը գիւղին մէջ, ժողովուրդը եկեղեցին գտնած պահուն, թիւրք ամբոխը ներս կը խուժէ և աղօթողները կը ծեծէ և կ'անարգէ։ Անշուշտ ասոնք լաւ նշաններ չեն, բայց միտարարական այն է որ ժողովրդական թիւրք շարժման պետերը՝ 18—20 մարդիկ ուղարկած են դաշտի գիւղերը, որպէսզի համոզեն թիւրք գիւղացիները հանդարտ մնալու և այսպիսի վնասակար քայլեր չառնելու։ 2ը գիտենք որքան պիտի յաջողին։

Նոր կուսակալ Ալի Պէյը վայրենի հակումներ ցոյց կուտայ։ Իր նկատմամբ հիւպատոսական շրջաններու կարծիքներն ալ աննպաստ են։

Տարածախնութիւնները—թէ պայրամէն վերջ խոնութները պիտի փակին, ցոյցեր տեղի պիտի ունենան—միշտ կը շարունակին։ Քաղաքին մէջ թրքո-հայկական յարաբերութիւնները առհասարակ լաւ են։ Թիւրք ժողովրդի մէջ իրենց իսկական վիճակի գիտակցութեան զարթոնքներ կը նշմարւին հետզհետէ։ Տարածւած կոչերը կը ցնցեն ժողովուրդը. իսկ կառավարական ճշնշուններն ալ իրենց կարգին։ Իբր թէ հարկահաւաքութեան գործերու մէջ բացեր գտած են և կ'ուզեն անոնց տեղը լրացնել՝ բարգելով ժողովրդի վրայ։ Միմիայն Վան հայ գիւղէն 600 ոսկի կը պահանջեն. կրնաք երևակայել մեր դրութիւնը...

ՉՄՇԿԱԾԱԳԻ ՇՐՋԱՆԸ

(Համառոտ տեղեկագիր)

20 Օոյեմբեր 1906.

Նպատակ ունենալով Չմշկածագի շրջանի մասին համառոտակի տեղեկութիւն մը տալ «Դրօշակի» ընթերցողներուն, մենք զանց առինք նկարագրել անոր աշխարհագրական դիրքն ու սահմանները՝ մտածելով որ ասիկա մեզ շատ հեռու կը տանէր. ուստի մենք աւելի նպատակաւորմամբ նըկատեցինք նոյն շրջանի ներկայ դրութեան, հայ գիւղերու և գիւղացու վիճակի և կառավարութեան ընթացքի մասին ծանօթութիւններ տալ։ Կարելի էր խորհիլ որ այսպիսի ծանօթութիւններ տրւած լինէին անցեալի մէջ, բայց թիւրք թէժիմի տակ ճշնշող երկիրը շարունակ փոփոխութիւններու ենթակայ է, ոչ թէ դէպի լաւ, դէպի վարժացում, դէպի բարգաւաճում, այլ ընդհակառակը, դէպի վատ, դէպի ետ, դէպի անկում։

Մեր շրջանը մօտ լինելով Տէրսիմին, կարելի էր անոր

մասին քանի մը խօսք խօսիլ։ Բայց առայժմ նոյնպէս այս կէտն ալ լուծեամբ պիտի անցնինք։ Միայն պարզանք պէտք է յայտնել որ այս ազատ լեռան ազատ զաւակները ենթակայ չեն թիւրքական լուծին և իրենց լեռներու բարձրութիւնէն իրաւունք ունին խրոխտաբար նայելու հայերու վրայ և անշուշտ սրտի գոհունակութիւն զգան տեսնելով որ թէև իրենց նախնիքը ժամանակին փոխած են իրենց կրօնական դաւանանքը, հրաժարած են հայ անունէն, բայց այժմ իրենք մնացել են ազատ, հպարտ ու խրոխտ և միանգամայն տէր իրենց ճակատագրին։

Յատկանշական երևոյթ մը միայն։ Տէրսիմին քրդանալով ընդունած է Շիի դաւանանքը, և հետաքրքրական է, որ Տաճկաստանի մէջ այս դաւանանքին հետեողներ ընդհանրապէս կ'առնեն Սիւննի թիւրքերը և համակրութեամբ կը վարեն քրիստոնեաներու—մասնաւորապէս հայերու հետ, որոնց հետ շատ վայրերու մէջ չփման մէջ են։ Թիւրքերու դէմ ատելութեան և հայերու համակրութեան մի նոր փաստը պէտք է համարել այն լուրը, որ վերջերս տարածւած էր. այն է թէ՛ սահմանադրութիւն Պարսկաստանի և Տաճկաստանի միջև պատերազմ մը ծագելու պարագային իրենք անցնին Պարսկաստանի կողմը և ամէն կերպ պաշտպան հանդիսանան հայերուն, որովհետև, բոլոր են, իրենց դաւանակից պարսիկ Շահը միշտ կը պաշտպանէ հայերը։

Տէրսիմի մասին այսքան խօսելէ յետոյ անցնինք Չմշկածագի հայութեան մասին գաղափար մը տալու։

Բնակչութիւնը. Չմշկածագ գիւղաքաղաքը կը գտնուի Խարբերդի նահանգին մէջ, Ունի մօտ 500 տուն բնակիչ, որոնց 200-ը հայեր են։ Գիւղերը մօտաւորապէս կը լինին 96, մեծ մասը թիւրք։ Հայաբնակ գիւղերը հետեւեալներն են.

Իւշ-Բէկ.—քաղաքէն քառորդ ժամ հեռու դէպ արևելք, ունի 220 տուն՝ զուտ հայաբնակ։

Հազարի.—քաղաքէն 2 ժամ դէպի հիւսիս, ունի 90—100 տուն՝ զուտ հայաբնակ։

Մամուս.—քաղաքէն երկու և կէս ժամ դէպի արևմուտք, ունի 80—90 տուն, յոյն և հայ խառն, մեծ մասը հայ։

Սեսուս.—Մամուսէն մօտ կէս ժամ դէպի հարաւ, թրքախառն, ունի 45—50 տուն։

Կարմիրի.—Մամուսէն մօտ մի ժամ դէպ արևմուտք, ունի 60—70 տուն, թրքախառն։

Երիցադարալի.—քաղաքէն մէկ և կէս ժամ դէպ արևմուտք, 50—60 տուն զուտ հայաբնակ։

Մուսուսի.—քաղաքի ձիշղ գիմաց, մօտ մի ժամ հեռու անկէ, ունի 20—25 տուն, զուտ հայաբնակ։

Բրէխի.—քաղաքէն մէկ ու կէս ժամ դէպ հարաւ-արևմուտք, ունի մօտ 20 տուն՝ ժամանակաւ զուտ հայաբնակ, իսկ այժմ մեծ մասը թիւրք։

Մօրշխան.—քաղաքէն 3 ժամ դէպ արևմուտք. 30 տուն, որուն 3-ը թիւրք։

Բագէրուս.—Մօրշխանէն կէս ժամ դէպ հարաւ, 25 տուն, հայաբնակ։

Գարասիսի.—քաղաքէն երեք ու կէս ժամ դէպ հարաւ, ունի մօտ 90 տուն բնակիչ, որոնց մեծ մասը հայ և մնացեալը թիւրք։

Մէզիրէ.—քաղաքէն 4 ժամ դէպ հարաւ, 30—35 տուն թրքախառն։

Բաղէճի.—Մէզիրէից մօտ մէկ ժամ, ունի 30—35 տուն, զուտ հայաբնակ։

Բէգրէթի.—քաղաքէն երկու և կէս ժամ հեռու, 15 տուն, զուտ հայ։

Վասուսալի.—քաղաքէն 3 ժամ, 20 տուն. մի քանի տուն թիւրքէն զատ՝ բոլորն ալ հայ։

Խաչտուն.—քիւրդ ցեղապետ Տեոպի գիւղը։ Ասկէց տարի մը առաջ չէն էր. վերջերս իր թշնամիներ

րու կողմէ աւարի տրեցաւ և հայ բնակիչները ցրեցան:

Մ ի ա տ ու Ն.—Եփրատի ափերու վրայ, դէպքէն առաջ 225 կիլոմետրի առաջնակարգ գիւղերէն մէկն էր 120—150 տուն բնակչով, այժմ աւերակաց կոյտ է դարձեր, պահելով իբրեւ յիշատակ իր նախկին վիճակէն հազիւ 4—5 տուն:

Յ ա ղ թ ու Ն ք.—Քաղաքէն 4 ժամ արեւելք. 3¹—40 տուն, զուտ հայաբնակ:

Խ ա ր տ ի շ ա ր.—Յաղթունքի մօտ, 10—15 տուն, մեծ մասը քիւրդ:

Ս ա կ ա տ ե կ.—20—25 տուն, մեծ մասը քիւրդ:

Ա գ ա ր ա կ.—Քիւրդ Տեապի գիւղը, (ուր ձերբակալեց Շմաւոն իր ընկերներով) ամբողջութեամբ քիւրդ, բացի մի քանի հայ մօրօպաներէ, որոնք կը ծառայեն Տեապին:

Ասոնցմէ զատ կան շատ մը հայ գիւղեր, որոնք այժմ բոլորովին անշէն մնացած են: Հարկ չենք տեսներ յիշատակել մի առ մի տաճկական գիւղերը, որոնք շատ ու շատ են: Ամենաբազմամարդ և նշանաւորներն են՝ Ս. Թորոսի և Պարասորի գիւղերը, որոնցմէ Պաշ Ագարակ և Պաշ Վարդենիք ունին աւելի քան 500 բնակիչ:

Վերայիշեալ հայ գիւղերէն Հազարի և Յաղթունք, ինչպէս նաև Իւշպէին ու Միատունը վերջին ծայր կառկածելի նկատուած են կառավարութեան աչքին: Կասկածելի անոր համար որ իբր թէ առաջի երեքը գտնուելով լեռան շատ մօտ, իբր ետ թախ (թաքստոց) կը ծառայեն ֆէդայիներու: Իսկ վերջինը իբր թէ զէնքի շտեմարան եղած է, լինելով Եփրատի վրայ և աջակցել է ու կ'աջակցէ միշտ զէնքի փոխադրութեան գործին: Ահա այս պատճառով կառավարութիւնը պարբերական խուզարկութիւններով չի գոհանալով, Յաղթունքի մէջ գրեթէ 20-էն աւելի զինուոր, Իւշպէիի մէջ մշտական պահակ և ոստիկան և 2 զափթիկներ, Հազարիի մէջ, ինչպէս կը պատմեն, մի կորստն բաղկացած 3—4 հեծեալ զափթիկներէ, իսկ Միատունը մշտապէս կ'ենթարկուի խիստ խուզարկութեան ու հսկողութեան, և հոն չի ուղարկուի զինուոր կամ ոստիկան այն պատճառով, որ անոնք վերին աստիճանի աղքատ են և չեն կարող կերակրել սուլթանի անօթի զինուորները:

Այս գիւղերէն քիչ-շատ բարեկեցիկ վիճակ ունեցողներն են՝ Յաղթունք, Խարտիշար, Սակատեկ և Հազարի: Յաղթունք լինելով Տերսիմի սահմանին շատ մօտիկ, միևնոյն ժամանակ իր քաջութեան շնորհիւ՝ համակրութիւնը շահած լինելով խօսուողի կողմէ ամենաբազմ և ամենաազգակ քիւրդ ցեղին, միշտ ազատ է կառավարական ծնշումներէ՝ համեմատած ուրիշ գիւղերու, և անոր բնակիչները, դէպքի ժամանակ, ինչպէս նաև վերջին անգամ իրենց պատկանած քիւրդ ցեղի և ֆէրհատանցիներու մէջ տեղի ունեցած կռիւի մէջ, չախմախի և եզալի հըրացաններով շատ լաւ կուեցան և չը թողին որ թշնամին գիւղը մտնէ: 225 կիլոմետրի գիւղերու մէջ ամենահանգիստը սա է. քիւրդերու կողմէն բոլորովին ապահով, իսկ կառավարութիւնը չի վարել որ անոնց հետ այնպէս, ինչպէս կը վարել ուրիշ գիւղացիներու հետ:

Խարտիշար գիւղը բացի մէկ ընտանիքէ, զուտ քիւրդ գիւղ է, և այն հայն ալ որ անոնց մէջ կը գտնուի, երբեք չի գանազանուի անոնցմէ: Երբ առիթը ներկայանայ, մի ուրիշ ցեղի հետ կուեցու, նա ալ կը մասնակցի անոնց և իր ցոյց տաւ՝ քաջութեան շնորհիւ իր ցեղապետին սիրելին եղած է, որը առանց անոր ոչ մի տեղ չ'երթար առանձին: Նա արդէն տարիքն առած 60-ի մօտ մարդ է, սակայն տակաւին առողջ ու կորիճ. իր թաւ մօրուը, երկայն ու թիկնեղ հասակը, կարմրուն այտերը ցոյց կը տան անոր կազմի սողողութիւնը: Նա հայտատէր է, բայց զուրկ բոլորովին գաղափարէ և միմիայն քրդախօս:

Հազարիի գիւղը 225 կիլոմետրի գիւղերէն ամենաբարեկեցիկը և ամենաբազմամարդն է, բնակիչները իրենց պայքերէն Պոլսոյ մէջ կալածներ ժողովրդած լինելով, այդ կալածներու օգնութեամբ և իրենց անդուլ աշխատութեամբ՝ պէտքը չեն զգացած թողնել իրենց հայ-

րենի օժանդակ և գնալ պանդխտութիւն: Չենք ուզեր ասել թէ անոնցմէ ոչ ոք ելած է պանդխտութեան, կան պանդխտներ, բայց համեմատաբար քիչ են: Մնալով հայրենիքի մէջ օրէ օր կ'աճին ու կը բազմանան. երիտասարդութեան թիւը կը ստարանայ: Իսկ ահա ասոր համար է, որ անոնք աչքի փուշ դառնալով կառավարութեան, եղեր են նաև մշտական որսը բարբարոս քիւրդերուն: Կառավարութիւնը երբեք պատրուակ չի փախցնել կեանքին հայը, մանաւանդ Հազարիի կեանքինը, որ այնքան դուր եկած է իր քիւրդին, ուտելու. եթէ երբեք առիթ չի գտնէ, անոնց համար պատրաստ է ըսել թէ—ինչ որ անձանօթ մարդիկ անցեր են այդ գիւղէն և զնացեր լեռը, ուստի պէտք է խուզարկութիւն կատարել, հարցաքննել և նոյնիսկ, դէթ առնալով մի քանի շաբաթ, պահակներ կարգել Եթէ այս վերջին միջոցն ալ չի լինի, կ'ըսեն.—Հազարիի կեանքները քիւրդերու հետ բանակցութեան մասեր են, պիտի ապտամբին և արդէն անոնք են, որ վառօդ և ապամութեք կը տան քիւրդերուն: Վերջապէս խեղճ գիւղը մէկ կողմէն թիւրք կառավարութեան, միւս կողմէն քիւրդերու բարբարոսութեան յատար մը դարձած է:

Ուշագրութեան արժանի է այս գիւղացւոց վերջին ծայր հիւրասիրութիւնը, միութիւնն ու սէրը իրարու հետ: Երբ մի օտարական կը գայ իրենց մօտ, անմիջապէս մեծ ու պզտիկ, առանց հասակի խտրութեան, կը բոլորին անոր շուրջը և տեղեկութիւններ կը հարցնեն օրուան դէպքերու վերաբերմամբ: Գիւղացիներու մեծ մասը իրենց հետաքրքրութեան պատճառով կը ստանան պոլսական թերթեր, որոնք սակայն չեն կարող անոնց պահանջներուն գոհացում տալ:

Ս Ղ Ե Ր Դ Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

ՊիթԼիՍ, 28 դեկտեմբեր 1906

Նախորդ նամակով գրած եմ Պշարի մասին: Նա սուլթանի զօրքերէն հալածուած՝ վերջապէս ճիգրէ կ'ապաստանի միջանցի Համէէ Ապտիլքերիմ փաշային քով և մինչև ամարանոց կ'ընկերանայ անոր՝ ցեղակիցներու հետ՝ Շատախի կողմերը: Թէև կառավարական հետապնդումներէն ազատ, բայց այս կեանքէն չը կըրնալով համ առնել, օր առաջ Ղարզան մտնելու և չարագործութեան ներքին հակումներուն յագուրդ տալու առաջադրութեամբ, իր չորս եղբարց հետ ամարանոցը կը թողու և շունչը կ'առնէ ուղղակի Համիտիէ Իպրահիմ փաշայի վրանները, Վերան-Շէհի: Թերևս ասոր շնորհիւ ներման արժանանայ և անգամ մ'ալ ոտքի կուռան ունենայ իր սիրելի Ղարզանի մէջ: Ուսկից ո՛ւր:

Այն Պշարը, որ թէ Սղերդի և թէ Տիարպէքիի կառավարութիւնները կը ցնցեր և զինուորականութիւնը կը գողացնէր՝ ասպարէզ կարգալով անոնցմէ ամենափոքր յանգանութիւն մը ձայնողին, այն՝ որ կայսեր քանի մը վաշտ զօրքերով, ձիաւորներով, թնդանօթներով անկարելի եղաւ ձերբակալել՝ այժմ գռնէ դռն, աշխարհէ աշխարհ ինկած ներում կը հայցէ, կը թախանձէ: Ապահովապէս՝ ուշ կամ կանուխ՝ առանց այդ ներման պիտի գայ հաստատուիլ իր աշխրեթին գիւղը, շնորհիւ իր պաշտպաններուն: Ինչպէս կը գտնէք սա քրդօ-թրքական բաղաբանութիւնը:

Սեպտ. 7.—Ուշքութեան աշխրեթի պետ Ամօ աղէն՝ իր ծառաներէն Բազմէ անուն քիւրդը Հիզնամիր կը ղրկէ, աղայական իրաւունքը,—տուրք—գանձելու համար: Հաւատարիմ ծառան նկատելով որ իր պահանջածը վայր-

կենսապէս չի վճարւիր, կէս ժամ մը չը սպասելով գիւղապետ Կուրատին տունը կ'երթայ իրիկեան ժամը տասին՝ և տուրքերուն մէկ մասնավճարը (20 մէճիտ) չը վճարած ըլլալուն՝ տեղն ու տեղը զայն կը սպաննէ:

Սեպտ. 2.—Սղերդի բանտին մէջ քանի մը քիւրդ ոճրագործներ պարզապէս իրենց գաղանային կարմիր պապակը անցընելու համար կը յարձակին իրենց հետ բանտակից թովմասեան ՆՏօի վրայ և դանակի հինգ վէրքեր կուտան անոր: Հէգ երիտասարդը մազապուր կ'ազատի անոնց ձեռքէն կիսամեռ վիճակի մէջ:

Սեպտ. 12.—Հացին սղութիւնը, պետական տուրքերուն օրըստօրէ աճումը, սուլթանին հաւատարիմ ծառաներուն խստութիւնները, քիւրդ աշիրէթներու յայտնի և ակներև հարստահարութիւնները կարծես անբաւական ըլլալին խեղճ ժողովուրդը կիզեցնելու, մերկացնելու և հուսկ ուրեմն սեւ մոխրի վրայ նստեցնելու, ահա ճենճոտ միւլաղիմներն ալ սիմոնականութեան ախտէն վարակւած՝ չեն խղճար ու իրենց իրաւասութեան սահմանէն դուրս, կը միանան այս ժողովրդային ընդհանուր կողոպուտին, մէկի փոխարէն ութ տասանորդ գանձելով, մինչդեռ ութէն մէկն է օրինականը: Բազմաթիւ օրինակներէն միայն մէկը յիշենք հոս: Հաճի Թահիրաղա-վատէ Նուրօ վարձու կ'առնէ Սղերդի մօտակայ Տէյր-Մըթաս գիւղը: Բայց նկատելով որ գլխաւոր հարստութիւն կազմող այգեստանները ցրտահար ըլլալուն պատճառաւ պիտի վնասէ և գիտնալով որ բրիտաններն ամենէն արդար բողբոջ իսկ չի լսիր, վնասը շահի վերածելու համար ճարպիկ միջոցով կը տասանորդէ գիւղացիներէն, կանխիկ դրամ կ'առնէ բռնութեամբ: Կիսմիայն երկու կողով խաղող բաղող մէկը 15 շրշ. տասանորդ վճարելուն վրայ գոհունակութիւն կը յայտնէր, բաղդատմամբ ուրիշներու, որոնք մինչև 35 շրշ. վճարած են առանց պտուղի մը համը տեսնելու:

Սեպտ. 14.—Հատհատէն կէս ժամ հեռու ճամբուն վրայ կը սպաննուի Զօնէ անուն ազգայինը, ուշքութանցի քիւրդի մը կողմէ, որովհետեւ խեղճ ծերուկը միայնակ, ցորեն բեռցած աւանակով, յանդգնած էր գիւղէն դուրս գալ:

Հոկտ. 7.—Նագիպան գիւղախումբը (Ղարզան գաւառակին մէջ) այժմ կը պարունակէ եօթը հայաբնակ գիւղեր, ընդամենը 225 տուն, որոնք ուրիշներու բաղդատմամբ չեն ու բարգաւաճ կրնան համարել իրենց վարուցանով և զարգացումով: Այս պարագան հարեան Ռշքութան աշիրէթին ուշագրութենէն վրիպած չըլլալով, ժամանակէ մը ի վեր նա սկսած է սաստկապէս նեղել և ճնշել գիւղացի հայերը և նոյնիսկ սպաննել զանոնք: Թայտնի է որ նագիպանցիք մշտնջենի կ'թան կողը համարած են յիշեալ աշիրէթին, որուն կը վճարեն տարեկան որոշ տուրք (ղաֆիրի). նաև ոչխարներէն, հունձքէն, տան պատրաստի պաշարեղէններէն բաժին կը հանեն ի հարկէ ճնշումի տակ: Բայց այդ ամէնը այլևս կարեւորութիւն չունին ուշքութանցիներու համար: Ասոնք պարզապէս աչք տնկելով գիւղացւոց տուն ու արտին՝ այսուհետեւ հայաջինջ քաղաքականութիւնը ձեռք առած են:

Իրերու աս տխուր վիճակին մէջ գիւղապետները, մանաւանդ Մուրատի և Զօնէի սպանութենէն յետոյ,

իրենց ինչքին ու կեանքին սպառնացող վտանգը յայտնի տեսնելով՝ գաւառակին ու նահանգին կեդրոն կառավարութեանց կը դիմեն, Պիթլիսի և Տիարպէրիի կուսակալներուն, 4-րդ զօրաբանակի միւլիերին, Բ. Գրան և Պատրիարքարանին, որպէսզի ուշքութանցիին հարստահարութեանց և ոճրագործութեանց դէմ արգելք դնելու համար գունդ մը պահապան զօրք հաստատուի գիւղերէն մէկուն մէջ: Այս առթիւ այսօր Առաջնորդարան մատուցած խնդրագրին պատճէնը կարեւոր կը համարեմ առաջ բերել հոս:

„Գերաշնորհ Սրբազան Հայր, Ղարզան գաւառակի ենթակայ Նագիպի գիւղախմբի եօթը զանազան գիւղերուն մէջ ցրած ազգայիններս, ընդամենը 225 տուն, ժամանակէ մը ի վեր կը հարստահարուինք և յայտնապէս կը կողոպուտինք Ռշքութան աշիրէթի քիւրդերուն և իրենց պետին թամոյի կողմէն: Ոչ մեր արջառ ու ոչխարին, ոչ մեր կալ ու կուտին և ոչ իսկ մեր անձին և ընտանեկան պատուոյն տէրն ենք:—Ումէն ժամանակէ աւելի վերջերս սկսած են չափազանցութեան տարելի նոյն քիւրդերու մեր վրայ ի գործ դրած հարստահարութիւնքն և սպանութիւնքը: Որոնց կէտ նպատակն է մասամբ կանգուն մնացած մեր եօթ գիւղերն ալ հալածել, ջնջել հայ ազգաբնակչութիւնը և վերջապէս գրաւել, իւրացնել մեր բոլոր գոյքերն ու կալածները“:

ՏՐԱՊԻՉՕՆ, յունւար 11

Ի՞նչ շրջանին մէջ թիւրքերու տրամադրութիւնը բոլորովին խաղաղ չէ. թէև ըստ երևոյթին ամեն ինչ լուռ է, բայց կառավարութիւնը երկիւղի մէջ կը գտնուի՝ ենթագործելով ինչ-ինչ գաւառագրութիւններ իր գէմ: Որեւէ խուզարկութիւն կամ քննութիւն խիստ գաղտնապահ և զգոյշ կերպով կը կատարուի:

Կարինէն ևս նման տարաձայնութիւններ կը հասնին. հոն պաշտօնեաներ աւելի քան զգոյշ են, եթէ չըսենք վախկոտ, իրենց քայլերուն մէջ: Գաղտնի շշուկներ ու փսիսակներ, նորանոր անակնկալներ գուշակող, ամեն օր անպակաս են:

ՆԱԿԱԿՆԵՐ ԲԱՆՏԵՐԻՑ

Տանկասանի մի քանի բաների մասին մեզ հասած նամակներ աստիճանաբար պատկերում են ներկայացնում հայ քաղաքական բանաստեղծների վիճակը. բաւական չեն բանի տվորական հալ ու մաքր, սնունդի ու օդի պակասութիւնը, գրանց վրայ աւելանում են եւ բանաստեղծական քիւր, քիւր, զէյթէկ տարրերի գործ դրած զաւանուքիւններ: Նամակներ թէպէտ բաւական ու չեն մեզ հասած, բայց նրանց միջոցով հասնում են, որովհետեւ կեանքը այդ զոյգումում ամեն օր նոյնն է: Ահա նմուշներ այդ նամակներից բաղած:

Ա.

ՊՕՏՈՌԻՄ, յունիս 20, 1906

... Հայ քաղաքական բանտարկեալները ճշմարիտ անթութեան են մատնւած: Կառավարութիւնը ցամաք հացէն զատ ոչինչ չի տար: Բայց այդ ալ տանելի է,

եթէ Զէյպէկները հանգիստ թողուն Սարգիս անուն բաղաբական բանտարկեալ մը, որ բարեկեցիկ վիճակ մ'ունի, սրճեփութեամբ կը զբաղի ու իր գաղափարակից չորս-հինգ ընկերներու հետ գէշ աղէկ ուտելիք մը կը գտնան Պօտոուսի բանտարկեալներու մեծ մասը Զէյպէկներ են, իզմիրի շրջականներէն և Այալնի լեռներէն հոն բերեալ. ասոնք տեսնելով, որ բանտին մէջ սրճարանը հայերուն ձեռքն է, շարունակ խաճէ կ'ապսպրեն ու կը խմեն: Բնական է, որ մը դրամ պիտի ուղւէր. «վայ, կեափուրներ մեզնէ դրամ ուզեն»... պողալով՝ սուրերով ու քարերով կը յարձակին խեղճ հայերուն վրայ: Բաղաբական յանցանքով ցկեանս դատաւարուած գաւառացի մը՝ Աւագ և Պօլսեցի մը՝ Թագէտս կը զարնին ու կը մեռնին: Ալէքսան անունով երիտասարդ մը՝ և ուրիշ հայ մը նոյնպէս կը զարնւին, բայց վերջերսին թեթեւ ըլլալով վերջէն կ'աղէկնան: Գիտէք, այդ երկու հայերուն մահուան առթիւ՝ զարնող Զէյպէկները ի՞նչ պատիժի կ'ենթարկուին — շաբաթ մը յարաբերութենէ զրկելու... ի՞նչ կըլլայ, քանի մը կեաւուռ ալ թող պակաս ըլլան:

Բ.

ԱՔԻԱ, յունիս 12, 1906

Բանտին նկուղներուն և կամարներուն մէջ ահառելի տաքէն կը մարին եղբր. թունաւոր միջատներուն թիւ ու համար չը կայ. մահամեղան տարրի պատճառած նեղութիւնները հայերու կեանքն ալ անտանելի դարձուցած են և գրեթէ բոլոր հայերը հիւանդ պառկեր են: Միհրդատ ձիւաճեան թոքախտով բռնւեր է և երկար ատենէ ի վեր կը տառապի. յոյս չը կայ, որ ազատի: Կառավարական ոչ մի խնամք հիւանդներու նկատմամբ. բոլոր կ'այցելէ միայն այցելած ըլլալու համար: Ո՛չ դեղ, ո՛չ խնամք և ո՛չ կերակուր. դրու-թիւնը յուսահատեցուցիչ է..

Գ.

ԱՔԻԱ, օգոստոս 19, 1906

... Մայիսի 30-ը և յունիսի 22-ը բանտային կեանքի ամենասեւ օրերն եղան. Ատապազարցի Յակոբ Լանփաշեան՝ գրեթէ երեսնամեայ՝ եռամսեայ հիւանդութենէ մը վերջ կը մեռնի, մայիսի 30-ին, խաղաղ մահով մը՝ գիտակցութիւնն ունենալով մահանք. և Իւսկիւտարցի Միհրդատ ձիւաճեան՝ 37 տարեկան՝ գրեթէ ամբողջ տարի մը տեղը տառապանքին հիւանդութեան մը զոհը եղաւ յունիսի 22-ին: Իսկ ասանկ հեռու իրենց սիրելիներու և հայրենակիցներու գորովէն ու կարօտ՝ բարեկամ-ազգականներու վերջին մնաս բարոյն առնելու գէթ նամակով մը, հայ երիտասարդ ոյժեր մէկ-մէկ կը թառամին տաճկական ամենակուլ բերդերու և զնտաններու խախլած պատերու տակ: Կենդանի մնացածներ երանի կուտան անոնց, որ մեռան և ազատեցան, զի իրենց կեանք ալ աւելի ձանձրալի է, քան մահը, որ այնչափ անողորմ է ու սե...

Դ.

Կ. ՊՕԼԻՍ, սեպտեմբեր 12, 1906

... Տասը երկար տարիներ են. ամէն օր վիշտ, ա-

նարգանք, տառապանք: Ի՞նչ է աս. օր մը չըլլար, որ առանց յուզման և զայրոյթի անցնես, գիշեր մը չըլլար, որ երկու երեք ժամ հանգիստ քնանաս. աս մէկ օր, մէկ ամիս, մէկ տարի չէ: Աս տաքին, մէկ սենեակին մէջ 100—120 հոգի իրարու վրայ լեցւած կը չարչարին կը կենան. ափերով լու և մլուկ կը տեղան վրադ. շատեր խենթեցան կամ մարեցան այս օրերս: Ի՞նչ ընես, անխուսափելիօրէն ստիպւած ես դարձեալ համակերպիլ, դարձեալ համբերել. բայց համբերութիւնն ալ վերջ ունի: Անտանելին ոչ թէ աշխարհէն հեռու մնալն է և ոչ ալ բանտի խիստ օրէնքները, այլ այն, որ դուն ստորնացած ես չափէն դուրս, որ մարդու տեղ չը պիտի գնես ինքզինքդ, ամէն լուտանք ու անարգանք պիտի կըլլես, է՛ն ոչինչ մարդը պիտի անարգէ բեզ, է՛ն աննշան քիւրդը պիտի հրամայէ ու յոխորտայ վրադ, է՛ն ստոր թիւրքը պիտի սաստէ քեզ և եթէ երիտասարդ ես, պատիւդ բռնաբարելու ջանայ: Պիտի գիմագրես, պիտի կուրս. և ահա, օր մը, սունդուէն իջած ատենդ, վատօրէն կը զարնուի. եթէ չը մեռար և դուն ալ զարկիր, ալ բանտէն դուրս ելլելու յոյսդ պիտի կտրես, շղթայ պիտի կրես, զնտանները պիտի նետուի և ի վերջոյ յիմարանոց նետելով՝ սիւներուն պիտի կապուի ու գիշեր ցորեկ ծեծւիս. վրադ տաք ու պաղ ջուր յաջորդաբար թափելով, պիտի զարնեն ու զարնեն. և կիսակենդան պիտի ընկնես ցեխոտ յատակի վրայ սե նկուղներուն մէջ, և անշըշուկ ու լռին պիտի թողնիս ու խամրիս և առանց անոյշ խօսք մը լսելու օր մ'ալ ոչ ևս ես...

ԱՆԳՐԱՎՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԻՄԱՆԵՐ

ՂԱՓԱՆԻ ԴԵՊԳԵՐԸ

(Ընդհանուր տեսութիւն)

Քաջարանց գիւղը գտնուում է թուրք գիւղերի կենտրոնում և երեք կողմից շրջապատւած է բարձր լեռներով: Վերին Ղափանում գտնուում են հինգ հայկական գիւղեր, այն է՝ Քաջարանց 75 տուն, Հանգ 35 տուն, Քուրդիբանգ 40 տուն, Փուխրուտ 23 տուն և Մաղրա 15 տուն: Թուրք գիւղերը կենտրոնացած են մի տեղ, գտնուում են միմեանցից կէս կամ մէկ վերտ հեռաւորութեան վրայ, իսկ հայերի գիւղերը՝ կղզիայած միմեանցից, 4—5 վերտի վրայ են և ընկած են դէպի հարաւ-արեւմուտք: Այդտեղի հայերը բուն ճիւղեր զարմաղբեցին՝ իրենց հարեանների հետ հաշտ և միաբան ապրելու: Նոյնը անում էր և փոքր իշատէ հասկացող թուրք մասը: Սակայն, չը նայած դրան, Օխչի-Ղաթարի պղնձահանքերը տանող ճանապարհը փակ էր հայերի համար և պատահած հային սրտում անհետ կորցնում էին կիսաճանապարհին՝ Կաթմաղ թուրք հասարակութեան հողում՝ Բաղաբերդի հին ամրոցների մօտ:

Օխչեցի Հաջի Բեգ Մելիք-Շաֆիեօվի առաջ բերած ագիտացիայից զուրկ բարձրացրին մի քանի աւագաններ, որոնք աշխատում էին պղնձահանքերում. դրանք են Շաբաղի-նեցի Իսմիլտանը, Շափաղուլուն, Մելտին, Հաթամը և Փիր-դալտանը: Քեարբալայ Սարուն: Դրանք՝ հեռացան հանքերից և հայեր սրաւով զբաղւեցին, մինչև որ քաջ Պետօի գնտալը վերջ դրեց Հալիճորի ամրոցների մօտ անցնող Հաջի Բեգի կեանքին: Այդ դէպքի շնորհիւ տիրեց խաղաղութիւն և թուրքերի խաղաղասիրական ցանկութիւնը այնտեղ հասաւ, որ օգոստոսի 6-ին Օխչիի հայ և թուրք հասարակութիւնը ժողով են կազմում Քաջարանց գիւղում և երկու արձանագրութիւններ կազմելով՝ ուղարկում են մէկը Զան-

գեղարքի գաւառապետին, իսկ միւսը՝ գեներալ Գօլօշչապովին՝ Վերջինին տալիս են մի հեռագիր։ Աղմիստորայիցի այդ երկու ներկայացուցիչներին ուղարկած արձանագրութիւններով թուրքերը հաստատում են, իրենց սեփական ստորագրութիւններով, կատարւած սոսկալի ոճիրները հայերի նկատմամբ, և պահանջում են՝ խռովութիւնների և ընդհարումների առիթ չը տալու համար՝ էկզէկուցիա դնել Վաթաղ գիւղում։ Հաշտութեան այդ արձանագրութիւնները ուղարկելուց յետոյ, հայերը նկատում են, որ Շաբաղին գիւղում երևում են օտարոտի անձնաւորութիւններ և ճանաչում են Նախիջևանի գաւառի թեի գիւղից եկած աւազակապետ Սուլէյմանին, Շիրալուն և յայտնի Մուրթուզին։ Քաջարանցիք նկատում են, որ Շաբաղինում բուն դրած այդ աւազակները անցել են Օխէի գիւղը և ժողով են կազմում ձուլա Հասանի տանը։ Ժողովին մասնակցողներն են. շաբաղինցի Իսմիխանը, Շափաղլուն, Մեխտին, Հաթամը, Մախտուաը, Շէյխամադը, փորձավդանցի Քեարբալայ Սարուն, Քեարբալայ Մուսան, Գունեամալին, Ելլազը, Մօլլա Հիւսէին Ալին, Ամրախը և Մութալիմը։ Ժողովից յետոյ այդ խումբը բաժանում են երեք մասի. մի մասը մնում է Օխէի-Ատիկի, միւսը՝ Փիրզավդան և երրորդը՝ Շաբաղին։ Թուրքերը հայերի աչքերին թող փչելու և քննեցնելու համար, ուղարկում են 12 թուրք ա խ ա խ ւ ա լ ն եր քաջարանցիների մօտ և ստում՝ „2ր նայած որ մեր մէջ երևացել են ջանքեղարներ, բայց թող դրանց ներկայութիւնը ձեզ երկիւղ չը ներշնչէ. մենք ապիւլ կօսք ենք տալիս, որ ոչինչ չի պատահի, մեր ստորագրած և ուղարկած արձանագրութիւնները ձեզ համար հաստատ ապացոյց կարող են լինել, որ մեր հաշտութիւնը անխախտ է. դրանց հեռացնելու նպատակով 500 ռ. փող ենք ժողովել. պիտի յանձնենք ջանքեղարներին և պահանջներ որ հեռանան”։

Հայերը եկեղեցու գլխին ամուր գիրքեր են շինում հատկանշով, որ սոսկալի գաւառագրութիւնների ծրագիրներ են կազմում, բոլորովին չը հաւատարմով և նշանակութիւն չը տալով թուրքերի խաբէրայական խօսքերին։ Այդ ժողովից երկու օր անցած, քաջարանցիները մի հեռագիր են կազմում և յանձնում իրենց համագիւղացի Թադէոս Միշասեանցին, Աղաբէզ Միշասեանցին և Ներսէս Բաղդասարեանցին՝ պարտաւորեցնելով Ագուլիսից հեռագրել։ Շաբաղինի թուրքերը գիւղից բաւականին հեռու բռնում են այդ երեքին և գլխատում։ Սպանւածների մասին հայերը ոչ մի տեղեկութիւն չունենալով և վատահ թուրք ներկայացուցիչների խոստումներին, հանգիստ ու միամիտ գնում են իրենց գործին ու աշխատանքին։

Օգոստոսի 10-ը լուսանում է... Սակայն մոռցւել և սե. օր է բացւում քաջարանցիների համար Վերին Ղափանի Օխէի, Ատիկի, Փիրզավդան և Շաբաղին գիւղերի թուրքերը, Նախիջևանի գաւառի թեի գիւղից եկած աւազակապետ Սուլէյմանի ղեկավարութեամբ, ահագին վոհմակով յարձակում են քաջարանց գիւղի վրայ։ Հայերը յանկարծ զգում են իրենց չընկալուած հազարաւոր թշնամիներով և գնդակների տարափը իրենց ուղղած։ Ժողովուրդը, խաղաղարար յանձնաժողովի անդամ Մանգասարեանցի շուտափոյթ կարգադրութեամբ, անմիջապէս հաւաքւում է եկեղեցին, ուր վաղօրօք ամուր գիրքեր են շինւած լինում՝ պաշտպանւելու համար։ Ինքը՝ Մանգասարեանցը, Ալէքսան Անդազովի և մի քանի կարիճ երիտասարդների հետ բարձրանում են եկեղեցու վրայ շինած գիրքերը և երեք օր գիշեր ցերեկ պաշտպանում են գիւղը։ Մի քանի ժամապ մէջ բոլոր արտերը, ցորենի խուրձերը Տըրդէհում են, թալանւում են գիւղացիների բոլոր ունեցածները և հրդեհւում է ամբողջ գիւղը։ Վերին Ղափանի հայ գիւղացիները Մազրայի բարձունքներից նկատում են հրդեհն բոցերը, բայց չնչին թիւ կազմելով՝ անկարող են լինում օգնութեան գնալ, մանաւանդ որ թուրքերը նախօրօք թէ գիրքերն են բռնած եղել, և թէ քաջարանց մանկու և օգնութեան դալու համար՝ պէտք է նախ 300 տնից բաղկացած Օխէին և 25 տնից բաղկացած Ատիկի չիմնայատակ դարձնել, կոտորել և ապա անցնել։ Ամբողջ

երեք օր, եկեղեցու խեղդող մթնոլորտում, պաշտպանւում են Ոմանք դուրս են եկել՝ որպէսզի եկեղեցու ժողովուրդ տներէից հաց բերեն, կամ փամփուշտ մատակարարեն կռուող կտրիճներին և կամ դրսից համող օգնութեան ուրախալի լսւրը բերեն ժողովրդին։ Այդ միջոցին եկեղեցու շէմքին սպանւում են Թադէոս Զաքարեանց, Խոսրով Վարդանեանց, Յակոբ Ալէքսանեանց, Ազան Մանգասարեանց, (ամուսինը կռւում է եղել գիրքում. նրան թաղել են եկեղեցու դրան շէմքի մօտ, առանց ամուսնուն յայտնելու)։ Յարութիւն Բաղդասարեանց, Միքայէլ Ալէքսանեան (կորցրել է քիթը և մէկ աչքը) Սարի Սահակեան և Մարիամ Տէր-Յովհաննէսեան։

Երբ պաշարման լուրը հասաւ, յեղափոխական մարտիկների շարքերը անմիջապէս պատրաստեցին օգնութեան գնալու։ Թուրքերը գինամիտով քահանայի տունը օդը հանելուց յետոյ քանդում են եղել եկեղեցու արեւմտեան կողմը՝ գինամիտով 590 հոգուն օդը պայթեցնելու նպատակով։ Կրիտիքական յոռիք էր. Եթէ մի քանի ժամ ևս ուշանար տղերանց օգնութիւնը—բոլորը անգառնալի կը կորչէին։ Բայց ահա Մեղրիից քաջ Ենօքի առաջնորդութեամբ Գեւորաղի անվհէր մարտիկները՝ եղբայրներին և քոյրերին ազատելու տենչով հասնում են, և մի աննկարագրելի ուժգնութեամբ դրոշ են տալիս։ Նախ յարձակում են Ատիկի վրայ, թուրքերին դուրս են բշտում գիրքերից և մտնելով գիւղը այրում, աւերում են և ապա իջնում են դէպի Օխէի։ Յանդուգն Ենօքը և իր քաջարի խումբը, ազատութեան դրօշակը պարգած, առաջ են արշաւում և թուրքերին ահաբեկ դարձրած, հասնում են քաջարանց։

Մեր գրիչը գծւարանում է նկարագրել այն ուրախութիւնը, երբ ազատութեան կրակով վառւած հերոս մարտիկները հասան և հաղար ու մի գծւարութիւններով բոլոր կանանց և երեխաներին տեղափոխեցին Հանգ գիւղը։ Ընթերցողին ենք թողնում հասկանալու այդ հոգեպան բերկրանքը։ Քաջարանցիներին ազատելուց յետոյ՝ Գեւորաղի և Վերին Ղափանի հայ գիւղացիներից կազմակերպւած արիափրոտ մարտիկները և քաջարանցի կռուող երիտասարդները Ենօքի ղեկավարութեամբ յարձակւում են քաջարանցից 250 քայլ հեռաւորութեան վրայ գտնուող Շաբաղինի վրայ, որ բաղկացած է 100 տնից և գրաււում են ամբողջ գիւղը։ Ահագին լէգէօն կազմող թուրքերը աւազակապետ Սուլէյմանի հետ միասին փախել էին, միայն մնացել էին գլխաւոր աւազակները՝ Իսմիխանը, Շափաղլուն, Մեխտին, Քեարբալայ Մարուն և դրանց ընկերները։ Մի տան միջից նրանց դուրս քշելու համար սկսած կռիւը եթէ ժամ տևեց։ Այս տան մօտ սպանւեց, այն էլ պատահաբար, մի հայի գնդակից, վահրավարի Միքայէլ Միշասեանցը և վիրաւորեցին հաղարակցի Համբարձումի ու վահրավարի Եղիան։ Սպանւած թուրքերի թիւը աւելի քան մեծ է։ Նոր խմբերը օրէցօր Գեւորաղից տեղափոխւում էին դէպի կռւի վայրերը։

Խմբապետները իրենց միասին կատարելուց յետոյ, քաշւեցին Հանգ գիւղը՝ պաշտպանելու փախտականներին և կետրոնացնելու ոյժերը՝ Փիրզավդանի վրայ յարձակելու նպատակով։ Քաջարանցի կռուում վիրաւորւած տղերանց բժշկական օգնութեան ցոյց տալուց յետոյ՝ թեթիւ վիրաւորւածները տեղաւորեցին Հանգ, Քուրդիքանդ և Փուրխուդ գիւղերում, իսկ ծանր վիրաւորները տեղափոխեցին Մեղրի գիւղը։

Հանդում մարտիկների խմբին օգնութեան հասաւ Դաշնակցութեան ղինւորներից անվհէր Խէզօն իր խմբով։ Խրմբերը իրենց ամբողջ ոյժով թուրքերին դուրս բերեցին իրենց գիրքերից և յարձակեցին Փիրզավդանի վրայ, որ 60 տնից է բաղկացած։ Վաղօրօք շատերը դուրս էին տարել իրենց ունեցածները։ շատերը մնացել էին, այդտեղ էին ապաստանած Օխէից և Շաբաղինից փախած թուրքերը։ Գիւղը հրդեհեցին և պատժեցին մի խոտութեամբ, որ պէտք է համարել անսովոր և ծայրայեղ... Կռւում ընկան Վալերեցի Վարդան Մելքումեանը և Մատթէոս Բաբսեանցը, և այդ՝ այն միջոցին երբ կռիւը համարեա վերջացել էր։ Նրանք բարձրացել էին մի քարի վրայ և ոգւորւած կոչւում էին «կեցցէ Դաշնակցութիւնը»։ Այդ բոլորին քարի

տակից թուրքերից մէկը, որի մայրը սպանւած ընկած է լինում մօտը, գնդակահարում է Մատթէսիին, իսկ մի ուրիշն էլ Վարդանին:

Քաջարանցիների շնորհ չափում է մօտ 56,000 րու: Հայերը ապրում են Հանդ և Քուրդիքանդ գիւղում: Թուրքական հինգ գիւղերն էլ ոչնչացած, աւերւած են, և այժմ բնակիչները քաղցած, մի կերպ հաւաքւել են իրենց գիւղերը և քարշ են տալիս իրենց թշուառ գոյութիւնը: Նրանք կրկնել են իրենց բոլոր ունեցածները: Թուրքական չորս գիւղերի սպանւածները 4—5 հարիւրի կարող է հասնել, իսկ վերաւորները էլ աւելի: Կուէից յետոյ թուրքերը ապրում են եղել «Ղափըջըզ», «Եաղլու-Գարա» և «Սախկալ-Սու» սարերում: Գիշերները իջնում են իրենց արտերից գետնախնձոր, ցորենի հասկեր, չը հասած բակլա քաղում ու տանում, սրպէսզի սովամահ չը լինեն...

Օգոստոսի 11-ին, երբ եղբայրապան հրդեհճը բռնկւում է ամբողջ Ղափանում, սարերից իջնող թուրք Սարալու հասարակութեան (III-ը պօլիցիական մասի) փարիշան, փութուշու, Մեհրալու, Սալաշ, Ալքանդ և Սարալու գիւղացիները հաւաքւում են իւրեք Ղաթար գիւղը և մտադրում յարձակում գործել Կափարու և Բարաբաթում գիւղերի վրայ: Կուէները սկսվելուց՝ պղծահասներին բազարում գտնւող փոստատունը, ինչպէս նաև պրիստաֆն ու հաշտարար միջնորդը տեղափոխւում են հայ Բարաբաթում գիւղը: Իսկ երբ «ուս պատրիստներ» խմբին պատկանող պրօֆօկատոր Կուէիկին առաջարկւում են հայերի մօտ գնալ, արհամարհական ժեստով պատասխանում է. «Ես թուրքերի մօտ կերթում»: Ղաթարեցոյ գլխաւոր ղեկավարը և զորավոր Կուէիկին էր: Նա էր, որ նրանց համար գիւղեր էր շինել տալիս և առհասարակ կուէի ծրագիր պատրաստում: Այդ օրը մեր քաջ Մուրադը իր պաշտելի խմբով լինում է Կափարու գիւղում, որի հեռաւորութիւնը Ղաթար գիւղից 1 վերստ կը լինի, իսկ Բարաբաթումից 2 վերստ: Օգոստոսի 12-ին Մուրադը կարգադրում է, որ գիշերը շրջապատեն գիւղը և ժամը 4-ին, համարեն յուսաբացին, յարձակւում է Ղաթարի վրայ: Այդ գիւղը, որ բաղկացած էր մօտ 80 տնից, համարւում էր Ղափանի թուրք գիւղերի մէջ ամենահարուստ և անմատչելի գիւղերից մէկը: Նախ զբաւում են բոլոր գիւղերը. քաջ Պապին մանում է գիւղի վերևի մասում ընկած տները, իսկ Մուրադը իր քաջերով ներս է թափանցում գիւղը. փողի ձայնի վրայ՝ գիւղերից տեղում են գնդակները և սկսում է սարսափելի կռիւ, որ տևում է մինչև երեկոյեան ժամի 8-ը: Թուրքերը քաջաբար դիմադրում են: Կուէի սկսելուց՝ Մուրադը յայտարարում է բոլորին՝ զինաթափ լինել և ազատել մահից: Թուրքերը պատասխանում են հայհայանքներով և սկսում են հրացանաձգութիւն: Մուրադը տեսնելով, որ գիւղը պէտք է ոչնչանայ, բոլոր կանանց և երեխաներին ազատում է և մի գիշեր ապահով պահելուց յետոյ՝ փոխադրում է Շահար-Շիկ թուրք գիւղը: Ապա ամբողջ գիւղը աւերւում, հիմնայատակ են դարձնում: Ղաթարցիներից սպանւել են մօտ 130 հոգի, իսկ Սարալու հասարակութիւնից մօտ 100: Կուէի տաք ժամին, երբ պրօֆօկատոր Կուէիկը տեսնում է իր ծանր դրութիւնը, գլխաւոր վերցրած, աղաչելով կանչում է. «Ես անսանաթոյժն եմ: Անօգուտ բացատրութիւն. նա թողւում է, աւելի լաւ է տեսնել մոխիր է դառնում զաթարցիների փլատակների տակ: Բացի դրանից, Մուրադը յայտնում է բոլոր պարսկահայատակ համաշարիներին՝ նախօրէր դուրս գալ և գիւղերի հսկողութեան տակ նրանց ուղարկում է մինչև սահմանը: Հայ գիւղերները իրենց բաւոյական պարտքը կատարելուց յետոյ՝ վերադառնում են ու այդ ժամանակ Աբգուշ Սամադ բէգ և Թեմուր բէգ Ջաւանշիրների կարգադրութեամբ թալանում են այդ ողորմելիներին և սպանում մի քանիսին՝ ասելով. «Դուք ինչու չէք մասնակցել Ղաթարցիների կուէին. հայերը ձեզ ազատել են, բայց մենք կը սպանենք ձեզ, որ ձեր կառավարութիւնը արթնանայ քնից և վրէժխնդիր լինի տեղական հայերից»: Այդ առիթով խիստ թշնամութիւններ են տիրում պարսկաստանից և այս կողմի թուրքերի մէջ: Հայերը

թուրքերից խլել են մօտ 40 հրացան: Աւերակների մէջ մնացել են կանգուն թուրքաց մզկիթը և հայոց պատմական տխուր ժամանակներից մնացած եկեղեցին: Հայերից սպանւել են 11 հոգի, այն է՝ գինւոր Կալօն (տաճկաստանցի), Շիխաուզեցի քաջ Պապին, Բարաբաթում գիւղացի Նիկօլա Տէր-Մատթէսեան, Բաղաբուրջի խանգանուս Խարալէկեանցը, Առաջածորցի խաշատուր և Անդրի թուամանները, Կուէիկի Պետրոս Պետրոսեանցը, Կափարուցի Մարգար Մկրտչեանը, Նորաշէնքի թուամանները, Չափնեցի Բախշի Փիրեանը և մի ուրիշը, որի ազգանունը չը կարողացանք իմանալ: Վերաւորել էր Կայծակ Առաքելը, որ բժշկեց:

Օգոստոսի 14-ին, թուրք հազարաւոր խուժանը պաշարում է Ուշանիս գիւղը, խլում գիւղի չորս կողմի գիւղերը և լոյս 15-ին յարձակւում գիւղի վրայ, որ բաղկացած է 35 տնից (Ղափան-Բարդուշատի հովտում): Հրամայում են զուռնա փչել և սկսում են հրացանաձգութիւնը: Մերոնք խիստ զիմաղրում են: Եղվարդից և Հազարակից օգնութեան է դալիս Գաշնակցութեան մարտիկների խումբը. կուէի ժամանակ գիւղում լինում է Հայրիկի խումբը՝ 7 հոգով: Գիշերը գիւղացի պահապան գինւորները բարձրանում են իրենց գիւղերը բռնելու. մեր տղերանց հարցին՝ «ո՞վ էք», թուրքերը պատասխանում են՝ «հայեր ենք», իսկ այդ ժամանակ հիւսիսից թուրքերը փչում են զուռնան և կանչում. «Ես Ալի, ես գրբլախ, ես գրբուխ, ջըհաթար» (էլ Ալի, կամ կոտորվիք, կամ կոտորենք, սրբադան պատեւում է): Լոյս բացւելուն պէս հայերը մի խիստ զրոհով վառնում են հազարաւոր թշնամուն՝ եկած Հաքարու, Բարդուշատի և Ղարաբաղի կողմերից: Հրացանաձգութեան ժամանակ սպանւել են ուշանիսեցի Կոստանդին Աղաբեանցը, Խաշակ Համբարձումեանցը՝ 16 տարեկան և Խըզրանց գիւղացի Թադէոս Արուշանեանը: Վերաւորել են 9 հոգի, երեքը գիւղերում, իսկ մնացածը գիւղում: Բոլորն էլ առաջացել են: Թուրքերից սպանւածների թիւը մեծ է, վերաւորները շատ ստուգել անհնարին է, որովհետև շատ զօջաղ են դիտկներ հաւաքւելում:

Օգոստոսի 16-ին ուշանիսեցի յարձակւում են Ուշան գիւղէյ Հաջի Ղուբբանի գիւղակի վրայ (9 տուն), կրակում են գիւղը. բնակիչները վաղօրօք փախած են լինում: Նայն օրը կրակում են Փիրիզուն բէգի ապրելու տեղը (25 տուն), Ահմադ բէգի ապրելու տեղը (4 տուն), փարիշան գիւղի մեծ մասը (80 տուն), Աթխուզը (12 տուն), Սալաշը (35 տուն): Վերջին գիւղից մնում է 5 տուն: Այդ բոլոր գիւղերը այժմ աւերակներ են:

Օգոստոսի 22-ին տեղի է ունենում երկրորդ յարձակումը: Բացի Հաքարու, Բարդուշատի և Ղարաբաղի կողմերից՝ եկած են լինում մօտ 1500 հոգի ձիաւորներ Պարսկաստանից, Բահմա և Ալի խաների առաջնորդութեամբ: Նախ կռուցւել են գիւղի վերևի գիւղերը բռնել, բայց չեն կարողացել: Առաջի գիւղերից մերոնք չէին թող տալիս թուրքերին յառաջ խաղալ, իսկ յետևից՝ Արծաւնիկի կողմից, գալիս է դաշնակցական Հայրիկի խումբը. սկսում է կռիւը: Թուրքերը վերևի մասից փախչում են գիւղի ներքևի մասը: Նրանք անհամար զնտակներ են արձակում, իսկ հայերը խիստ մթութեան պատճառով չեն պատասխանում: Լոյս բացւելուն պէս տեղի է ունենում տաք կռիւ: Կուէի ամենակրիտիքական ընդհանրում, արեգակը ծագելիս, օգնութեան է հասնում Մուրադը իր խմբով: Նա Խապոնին ուղարկում է թուրքերին վերևի կողմից քշելու, իր ընկեր քաջ Աւետիսին և Հայրիկին ուղարկում է գիւղի առաջից քշելու, իսկ ինքը, Մուրադը անցնում է Քաշանի ներքևի ամենավտագաւոր մասը: Կուէի ժամանակ թուրքերը գոչում էին. «Մենք առաջի եկողներից չենք, մեզ քէջափափաներ կ'անեն, Պարսկաստանից եկած. քանի օր էլ տեղի պէտք է կուէնք, գիւղը չաւերած չը պէտք է վերագառնանք»: Այդ խօսքերից յետոյ՝ կէս ժամ չանցած՝ թուրքերը լեղապատուտ սկսում են փախուտ տալ: Փախչելու ժամանակ քաջ Մուրադը կանչում է թուրքերէն. «Էյ խանուներ, էյ անամուսներ, ո՞ր էք փախչում, ինչ լուր էք

տանում ձեր կանանց, մի երեք-չորս ջան ֆեդայու կուռ է, եկեք թէյ խմելու, հիւր եղէք, այժմ գեղեցիկ խանութներ: Խաների ձիաւորները լսելով Մարգարի թուռաւոր խօսքերը՝ դառնում են գէպի իրենց մեծերը և ասում. «Մի՞թէ կարելի է այս նամուսը տանել»: Խաները պատասխանում են. «Տղերք փախէք, այս գոյնը այն գոյնից չէ. տակին մնացողը նամարդ է, փախչել պրծնելն էլ մի առանձին տղամարդութիւն է»: Տեղական թուրքերից մասնակցողները եղել են՝ շարալուեցի՝ Մարգարի Շահվերանը, Գաղաշ բէգը, Նասիբ բէգը, Ահմադ բէգը, Փատալի բէգը, Զեբուլայի բէգը, Լաւոնից՝ մոֆուզլուեցի Սամադ Բեարբալայ ֆարաշ ղլիին, Հալ գիւղացի յայտնի աւազակ Իսմայիլ Աբաշ ղլիին, որ նորերս սպանւեց խանլըղեցի Աբբաս տանուտէրի ձեռքով: Այդպիսով Ուշանիսը ենթարկւել է երեք անգամ յարձակման. այրել են 42 մարդ, 15600 խուրձ ցորեն, աւերել են 5 ջրաղաց, սպանել են 5 և վիրաւորել 13 հոգի: Ասում են, որ թուրք եկողներից կէսը չեն վերագարձել:

Չենք կարող չը յիշատակել թուրքերի մէջ համակրելի դէմքերից երկուսին, որ միշտ գէտ են եղել անմիտ կուռներին: Գրանք մի-մի մարգարէներ էին իրենց ժահրատ կեանքի մէջ բայց նախ համարւեցին դաւաճաններ, իսկ այսօր, երբ թուրքերը ստիպւի պարտութիւններ են կրել և բառիս ամենաընդարձակ մտքով քայքայւել են անտեսապէս, այժմ միայն մեծարում են նրանց և ասում. «Երանի թէ լսեինք ձեր խօսքերը»: Գրանցից մէկը խօշաֆանցի Բեարբալայ Հիւսէին բէգ խօշաֆանիին է, իսկ միւսը Գենուազի Լեհվազ գիւղացի Բեարբալայ Մեխաին: Գաւառապետ Միտկեվիչը խօշաֆանով անցնելուց հարց ու փորձ է արել Բեարբալայ Հիւսէին բէգին և մեզ ասաց որ այդ համակրելի թուրքը մեղադրում էր ամբողջապէս թուրքերին. նոյնը հաստատեց Բեարբալայ Մեխաին՝ Մեղրիում: Խաների դա-

լուց՝ Բեարբալայ Հիւսէին բէգը շատ է գիմադրել, որ չը յարձակւին Ուշանիսի վրայ, բայց չեն լսել Գաւառապետի ասելով Ուշանիսի կուռում թուրքերից 600 հոգի են սպանւել:

Օգոստոս 26-ին Խնօքի և Խէչօյի խումբը յարձակւում է Աւաջաձոր (20 տուն), Աշիլա (60 տուն) և Թուռիս (20 տուն) թուրք գիւղերի վրայ, վերին Ղափանի Խուստափ տարի ստորոտում. գիւղերը աւերել և հրդեհել են: Աջիլաում սպանւել են 9 թուրք. մնացած երկու գիւղի սպանւածների թիւը անյայտ է: Օգոս. 27-ին Թաղէնիսի խումբը յարձակւում է Բօղաջուղ (25 տուն) գիւղի վրայ և կրակում:

Սեպտեմբերի 6-ին, թուրքերը, յայտնի աւազակ Հալ գիւղացի Իսմայիլ Աբաշ ղլիւն առաջնորդութեամբ, քշում են Խղվարդ գիւղի տաւարները Մուգան անտառած տեղից: Գաշնակցութեան զինւորները՝ միայնած տեղացիներին՝ քշում են թուրքերին, յետ խլում տաւարները և խուրձերից բերում են 6 ձի, կրակում Սալգաշ գիւղի բոլոր խուրձերը և անցնում են գէպի Սալգաշի Հարթիկա տարի վրայ գտնւող 8 օրսները. ոչնչացնում են բոլոր անեցածները և գերի են վերցնում երեք հոգի: Խղվարդից ճանաչելով, որ աղբատ և անմեղ ընտանիքից են, իւրաքանչիւրին մի ձեռք հագուստեղէն են տալիս և բաց թողնում: Այդ գէպը բնդհանուր դարմանք էր առաջ բերել թուրքերի մէջ: Սեպտեմբերի 7-ին Խապօնը իր խմբով և հազարակեցիները քշում են Ղարաշիմանից 135 տաւար, 8 ձի և 9 ջրի: Գաւառապետի և զօրքի գալու պատճառով, կարգադրւած է եղել նախադարձի չը լինել և շնորհիւ այդ հանգամանքի գերծ են մնում աւերումից՝ Ղարաշիմանը, Սէրգլարը, Գեօգալիլուն, Օխտարը, Խալաշը, Կաթաղը, Գարգիլուն և մի բանի մանր մունր գիւղեր:

(Կը շարունակվի)

Հ Ա Յ Ո Ր Դ Ի Ն Ե Ր Ը

ԺԳ.

ՈՐԲԵՐՈՒՆ. ՃԱԿՍԱԳՐԷՆ.

Չարհուրելի անցեալ, մոխիրներուն վրայ ծնաք և աւերակներէն քայքայիք. երբ սուրէն զարնուած Հայրենիքը իր բերանը հասնող իր արիւնին մէջ կը խղուէր՝ բնութեան դժխեմ օրէնքը օր մը զձեզ մարդկութեան ճիրաններուն մէջ դրաւ, եւ այսպէս՝ արեւին և կեանքին կարմիր լոյսը չփութեցիք ձերիններուն արիւնին հետ... Սարսափներուն յառեցաւ ձեր մաքուր հայեացքը, ծաղիկներու և ժպիտի փունջներուն տեղ: Հողեվարքի ի՞նչ հեծեծանքներ և ի՞նչ օգնութիւն պաղատող եղբրական ճիչեր, ի՞նչ գալարում, ի՞նչ մազբուռ փետտում, ի՞նչ կոծ և ի՞նչ մահաձայն լաց, ի՞նչ արցունքներու հոսումներ, ի՞նչ աղբրոսանք և քանի՜ քանի՜ կարուած զլուխներ, Եկան՝ ձեր մանկական վճիռ աշուրներուն առջևէն գլորելու... Ոսկրներու փշրումը լսեցիք, ձեր ծնած տանը սեմերուն վրայ, Գիշերներով՝ շտապօրէն, կացիններու կայծարձակ հարուածներուն տակ... Եւ հովերը դժբախտ քաղաքներէն՝ այրուած մեռելներու մահաւան հոտը ձեզ բերին:

Ոչի՞նչ չը հասկցաք, բայց ձեր ծնող ուղեղներուն մէջ սարսափը և վրէժը իրենց յիշատակները ցանցին, եւ թերեւս ապագայ հերոսութիւններու ահաւորագոյն հունար իր տեղը ինկաւ... Գիտեմ՝ որ, երբ ձեր խանձարուրներուն մէջէն շարժեցիք ձեր ձեռքերն շուշանափայլ, Անոնք մահաւան վարդերուն պէս կարմրեցան ձեր մայրերուն արիւնէն իսկ, եւ համբոյրի, օրօրներու, գգուանքի և սիրոյ քաղցրութեանցը տեղ, Ո՞վ գիտէ, թերեւս կաթիլ մը արիւն էր որ ինկաւ ձեր աչքերուն և ձեր բերաններուն մէջ... Ա՛հ սարսափներու ցնորաբեր օրեր, ե՞րբ սիրտի մեռնիք յիշատակներու դուռներուն առջև, ե՞րբ...

Դուք դժոխքներու պատիժներուն մէջ ծնած անմեղ և քաղցրագէտ հրեշտակներ, Օրերով լացիք, հեծկլտացիք՝ անծանօթին չարութեանը գէտ անգօր մերկութիւններ, Բայց լող չի կար: Ձեզ համբուրող բերանը իր համբոյրին մէջ էր ոգեվարած... Չարակամ և անգիտակից բնութիւնը կար միայն մեղաւոր մարդկութեան անասնութեանը հետ... Ձի՛ հակցաք թէ ինչո՞ւ ժպիտի տեղ արցունք էր որ ծաղկեցաւ ձեր աչքերուն մէջ,

Ինչո՞ւ ձեր բնածին առհասարակներ չճանչցուած սէրերու կրակէ կարօտն ունէր:
Ինչո՞ւ լռեցին թռչուններուն գեղգեղները և ինչո՞ւ հեռուստի ու սեռ ունեւորները սաստկացան...:
Ինչո՞ւ առուակներուն ջուրերը լրսաւոր և երջանիկ փրփուրներ չունէին...
Ինչո՞ւ ձեզ ստեղծող մարմինները սրածուեցան ձեր սրբոյցներուն առջև,
Ինչո՞ւ գրացի գերեզմանոցին մէջ կիսամեռներուն մարմինները պարիսպներու պէս բարձրացան...
Եւ ինչո՞ւ ժրաջան ու բարեկենցաղ գիւղերը իրենց դաշտերուն և մանկաղին հետ մխրացան:

Օրեր անցա՛ն... մահը յոգնեցաւ և արեւմտքէն կեղծուպատիր ձեռքեր,
Չեղի՛ իրենց անգութ որբութեան մատնանը բերին, բաժին մը չոր հացի հետ:
Ու խելափորոյ՝ սկսան ձեր մատաղ հագիններուն մէջ իրենց ստութեան սերմերը ցանել:
Աստուածներու խորհուրդէն և անունէն խօսեցան և փրկութեան դուռները ցուցուցին...:
Իբր պարմութիւն՝ ցնցոտի՛ մը նետեցին ձեր մերկ և ազագուն մարմիններուն վրայ,
Ցանցեր հիւսեցին ձեր անբիծ կարապի անմեղութիւնը վանդակելու համար:
Եւ թշնամիին սուրբուն տեղ՝ իրենց շահախնդիր և մեղաւոր խաչերը շարժեցին...
Իրենց պիղծ ծոցերը և իրենց արծաթը զոհերուն համար միայն բաց էր,
Իրենց բարի ժպիտը կեղծ էր, իրենց խոստումը մահաբոյր և նայուածքին ծածկամիտ,
Իրենց բուրմառին մէջ մեր արիւնն էր որ խունկի փսխան կը ծխար,
Իրենց սկիհը մեր արդունքովը լեցուած էր, և այն հացը զոր ձեր առջև նետեցին,
Մեր թշուառութեան և մեր տառապանքին վարձատրութեան արժէքն էր անգութ:
Քրիստոսին խօշը ծամածուցին ստրկութեան լեռները օրհնութեան լիւրով,
Եւ ուղեցին ձեր գողգոթ կենեքներուն վրայ արեւմտքի սակարաններուն հիմնաքարերը շարել...:

Ջարհուրելի՛ անցեալ, երբ մոխիրներուն վրայ ծնաք և կարմիրներէ՛ն քաղեցիք,
Բայց այսօր գիտէք թէ ինչո՞ւ համար մեր արիւնը ծով առ ծով՝
Տարիներով՝ և անխնայ և ստրկօրէն և հերոսաբար ձեր ծնած հողը սրբեց...
Ցեղը ապրի՛լ կուգէր, իր շղթաները իր ստերներուն տակ թափել՝ կուգէր,
Իր կապանքները փշրել՝ կ'ուգէր, իր աչքերը սրել՝ իր ձայնը որոտալ՝
Ապրի՛լ կուգէր, ստեղծել կուգէր, պայծառօրէն վերածնի՛լ կուգէր,
Որովհետեւ ինքն ալ նախահայր էր և գեղեցկութեան և զգացումի՛ և ազգերո՛ւ,
Որովհետեւ հպարտ էր իր անցեալէ՛ն, իր մտածումէ՛ն, իր ուժէ՛ն և իր կարմիր փառքէն,
Որովհետեւ ինքն ա՛լ իր ոսկի ձայնը ունեցած էր հնօրեայ մարդկութեան մորիկին մէջ...
Որովհետեւ ինքն ա՛լ երգած էր, ինքն ա՛լ յաղթած, ինքն ա՛լ ճարտարակերտած և ոտաններ կառուցած...
Ինքն ալ եղած էր ջահակի՛ր, սերմնացա՛ն, գաղափարապա՛շտ, և արքա՛յ, և դիւցազնո՛ւն:
Եւ վերստին ապրի՛լ կուգէր, գեղեցկանալ և իրականանալ կուգէր, կեա՛նք կուգէր յափշտակե՛լ, կեա՛նք, կեա՛նք...

Չեր ձեռքերը օտարին հպումէն յե՛տ քաշեցէք, մերինները պատրաստ են և զինաբարձ:
Անոնք մեր փրատակներուն վրայ իրենց ետամուկի գաւաճան ու կեղծ քարոզը կուգեն ցանել:
Այսուհետեւ ձեզի հետ ենք մենք, ո՛վ մահուան արգանդէն կենեքին մէջ ծնանող Որբեր,
Մեր արդար մտածումը ձեր սիրոյն համար բմբոստ է, և մեր սուրբ ձեր սիրոյն համար պիտի ապրի՛:
Մեր ճշմարիտ սուրբ և մեր Գրօշը պիտի ապրի՛ն՝ որովհետեւ կամքերնիս կարմիր է և վրէժնիս անպարտելի,
Մեր սուրբ պիտի՛ ապրի, կեանքը ստեղծելու ու մահը անգամ մըն ալ մեռցնելու համար...
Մեր սուրբ պիտի՛ ապրի՝ փրկութեան և ազատութեան արեգակներուն ի խնդիր՝
կեանքն համար, յոյսն համար, արգասաբեր հողին և մայրական Հայաստանին համար:

ՍԻԱՄԱՆԹՕ

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ի Ա Մ Ն Ե Ր

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Ստաւուհի՝ 1904 յուլիս—յուլիսի կալուցներում ընկածներին

(Վ. Ե. Բ. Զ.)

ԱՐԹԵՆ ՀԷՆՐԷՑԻ.—21 տարեկան, երկարահասակ, չէկ մազերով, եռանդուն երիտասարդ: Յեղափոխական գործը միշտ բարձր էր գաւառում սեփական գործերից, և շատ անգամ վերջիններս զոհուած առաջիններին: Մասնակցեցաւ Լաճըկանցիքի կռիւն, և այնտեղ ծնկնե-
րից վիրաւորւելով՝ փոխադրւեց հիւանդանոց, խօսն գիւղը՝ Երբ թիւրքերը գրաւեցին Վէլիէ-Գուզան, մտան նաև Խոփան, ուր նոյնիսկ հիւանդանոցին մէջ սպանեցին Արթենին:

ԽԱՉԻԿ ՄՇԵՑԻ.—22 տարեկան, միջահասակ, չէկ մազերով, ծաղկատար, կորովի երիտասարդ: Փոքր հա-
սակից խեղճ էր ընկնում իր կուռղ բնաւորու-
թեամբ. շատ անգամ էր պատահում, որ նոյնիսկ ա-
մենաչնչին առիթով կռիւներ էր անում թիւրք երե-
խաների հետ, որով միշտ տեղի էր տալիս հօր յան-
դիմանութիւններին: Հայրը որմնագիր էր. ինքն ևս մի
ժամանակ այդ արհեստով օգնեց հօրը: Բայց որմնա-
գրի աշխատութիւնը շուտով ձանձրացրեց նրան... Նրա
միակ ցանկութիւնն էր զինւոր դառնալ և Սասուն եր-
թալ: Այդ առիթով նա գիմուսներ արեց յեղափոխա-
կան մարմիններին, բայց մի քանի անգամներ մերժեց:
Սակայն երբ կռիւը սկսեց, նա ինքնաբերաբար մտաւ
կուռղների շարքը: Գէլիէ-Գուզանի կռիւ ժամանակ վի-
րաւորւեց և գերի ընկաւ թիւրքերի ձեռքը, որոնք
ինամբով վերցրին իրեն, յոյս ունենալով որ պիտի կա-
րողանան նրանից գաղտնիքներ որսալ: Այդ նպատակով

առանձին ջանք թափեց նոյնիսկ կուսակալը, բայց միշտ ի զուր: Վերջին անգամ, երբ թշնամիները յոյաները կտրեցին նրանից ունէ գողտնիք կորցնելու, փայտի հարւածները տակ ջարդ ու փշուր՝ սպանեցին...

ՏԷՐ ԳԱՐԲԻԷԼ ՓՈՒՐԻՍՎԱՅԻ.—40 տարեկան: Աչքի ընկնող մասնակցութիւն ունեցաւ գործին 1894 թւի կռիւների ժամանակ, երբ իր օրինակելի քաջութեամբ խրախոս եղաւ շատերին: Կռիւց, կոտորածից յետոյ՝ Բոս-Սըլո յայտնի քիւրդ աղան նրան ընտանիքով միասին արքորեց Բսանաց գաւառ, ուր մի քանի տարի մնալուց յետոյ՝ կրկին վերադարձաւ փութակա (Տալուրիկի մի թաղ): Երբ Հրայր Տալուրիկ մտաւ, Տէր-Գարբիէլ բարոյական մեծ օժանդակութիւն ցուց տւաւ նրան, ոյժ տալով նրա պրօպագանդին: Կռիւների առաջ, երբ պէտք եղաւ Տալուրիկի ժողովուրդը փոխադրել Գէլիէ-Գուզան, նա էլ եկաւ իր հօտի հետ և մասնակցեցաւ մի օրեայ կռիւին: Կռիւներից վերջ՝ Տալուրիկ է վերադառնում. ճանապարհին յանկարծակի կերպով պաշարուում է քրդերից և սպանւում, իսկ հովիտիցի Կամէ անունով 80 ամեայ մի ծերունու հետ:

ՍՏԷՓՕ ՕՍԷԵԱՆ.—Գէլիէ-Գուզանցի, 24 տարեկան, ամուսնացած, կուռղ յայտնի ոյժ, որին մատով էին ցոյց տալիս գիւղացիները: Քեաթըպ Ավէի եղբայրը: Բաւական մեծ մասնակցութիւն ունեցել էր նաև 1894 թւի կռիւների ժամանակ: Կռուց և սպանւեց Գէլիի կռիւն առաջ. դիակը անյայտ մնաց:

ԱԼԷԲՍԱՆ ՄԱՀՏԵՍԻ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—Մշեցի, 30 տարեկան, գեղեցկադէմ և առոյգ երիտասարդ, հարուստ ընտանիքի զաւակ, հայրը քաղաքի մեծ կալաճատերերից մինն էր: Գիտէր լաւ ձի նստել և ուղիղ նշան խփել: Երբեմն ծառայում էր կառավարութեան մօտ՝ իբրև ձիաւոր ոստիկան: Վերջերս թողել էր այդ ծառայութիւնը և գործում էր իբրև յեղափոխական: Սասուն գնացող կամաւորներից մէկը եղաւ: Ծնողքը շատ աշխատեցան նրան արգելել լեռ գնալու և յաջողեցին էլ անգամ: Բայց մի օր Ալէքսանն իր զէնքերը մօտակայ գիւղը ուղարկելով, ինքն ևս մի պատրւակով տնից դուրս գալով՝ ուրիշ կամաւորների հետ գաղտնի Սասուն անցաւ: Կռիւն ամենատագնապալի ժամանակն էր: Թշնամին պաշարել էր Գէլիէ-Գուզանը իր շրջականերով: Լինում է Մըջըլների ամենավտանգաւոր կուռում. նոյնպէս և քոփի վանքի կուռում: Այս վերջին կռիւց յետոյ գետն անցնելիս, ջրի հոսանքիցն է տարւում թէ կուռթը բարձրանալիս սառնամանիքին զոհ լինում, յայտնի չէ. անյայտանում է:

ԱՄՀԱՆ ԱՎԷԵԱՆ.—Մշեցի, 25 տարեկան, ամուսնացած. հայրը կօշկակար էր, ինքն ևս պարապում էր նոյն արհեստով: Կռիւները սկսելուն մտնում է կամաւոր զինւորների շարքի մէջ: Գաշտ վերադառնալիս, կուռթը բուքերից է բռնւում, ընկերներից ետ մնում ու ցրտահար միռնում: Մի քանի օր վերջ ճամբորդ սասունցիներ պատահում են նրա դիակին, զէնքերը վրայից առնում են և թաղում:

ԸՌՔՕ ԿԸՆԷԵԱՆ.—Շէնքըցի, 85 տարեկան, բոլորովին ալեւորած, երկարահասակ, կարմրերես և երի-

տասարդական աշխոյժով. դէմքի աջ կողմի վրայ ճակատից մինչև այտի կէսը կրում էր մի խոր սպի, մի ուրիշը ճակատի ձախ կողմում, դաշոյնի ուրիշ երկու հարւածներ ևս նկատուում էին ձեռքի և կողի վրայ և այդ սպիները ստացել էր քրդերի դէմ եղած կռիւների մէջ, որոնցով լի է իր երիտասարդական կեանքի պատմութիւնը: Քիւրդերի վրայ յարձակւել, նրանց ոչխար, տաւարը թալանել, փոխադարձաբար նրանց պատճառած մէկ փեսի փոխարէն տասն հատուցանել, նրա համար ամենասովորական բաներ էին: Այդպիսով նա մեծ սարսափ էր թողել քիւրդերի մէջ: 1894 թւի կռիւների ժամանակ մեծ քաջութեամբ կռուցաւ թուրքերի և քիւրդերի դէմ, իսկ այս վերջին կռիւների առաջ երբեք կուռղների առաջին շարքերից չը հեռացաւ: Երբ որ թշնամին պիտի գրաւէր իրենց գիւղը, իր ոչխարն ու տաւարը փոխադրել տալուց յետոյ, իր ձեռքով այրեց տան բոլոր պաշարեղէնները, որպէսզի թշնամիները չօգտուէին նրանցից: Գէլիէ-Գուզանի գրաւումից յետոյ դաշտ իջնելու ժամանակ, Կուռթը մօտ, հանգիպում է մի խումբ քիւրդերի, որոնք ճանաչում են նրան և շրջապատում: Ընթոն հերոսաբար կուռում է, բայց և սպանւում: Թշնամիները կտորկտոր են անում նրա մարմինը...

ԿՈՒՐՃՕ ԿԸՆԷԵԱՆ.—Նախորդի եղբայրը, 70 տարեկան, սպանւում է, յայտնի չէ, կռիւներից ո՛րի մէջ:

ԱՐԱԹ ՀԱՐԹԵՐԹԻ.—20 տարեկան, ընկերների հետ կուռած է եղել Աղձան գիւղում, ուր և սպանւել է:

ՉՈՐՍ ԱՂԱՆՏԻՆԵՐ ԱՐՇԱԿ, ՏԻԳՐԱՆ, ՍԷՅԴՕ ԵՒ ՄԻՆԱՍ.—Չորսն էլ կտրիճ զինւորներ: Կռիւների սկսելուն Սասուն գնացին իբրև կամաւորներ և մասնակցեցան բոլոր կռիւներին: Գաշտ վերադարձին, երբ Անդրանիկ սկսում է Կուրավուի մեծ կռիւը, սրանք ևս կուռում են Աղձանում. մի օրեայ պայքարից յետոյ անցնում են Շէյխ-Իւսուֆ գիւղը, ուր շարունակում են կռիւ մինչև կէսօր. միայն վերջին փամփուշտը կրակելուց յետոյ է որ իրենք ևս սպանւում են:

ՅԱԿՈԲ ԿՈՐԱՎԱՅԻ.—34 տարեկան, ամուսնացած, եռանդուն երիտասարդ: Եղել է Սասնոյ բոլոր կռիւներում: Սպանւեց քեռու հետ:

ԳԱՍԳԱՐ ԿՈՒՐԱՎԱՅԻ.—28 տարեկան, ամուսնացած, հարուստ ընտանիքի զաւակ. բաւական ժամանակ իբրև զինւոր ծառայել է Սասունի խմբերի մէջ, ապա իրենց գիւղը վերադառնալով՝ աշխատել է տեղական գործերում: Երբ քեռին վերադառնում է Սասունից, միանում է նրան և նրա հետ էլ սպանւում:

ՆԱԶԱՐ ԿՈՒՐԱՎԱՅԻ.—27 տարեկան, նոր ամուսնացած: 1904 թւին, երբ Հրայր փախստական է դառնում, սա իբրև զինւոր միանում է նրան, գնում է Ախլաթի կողմերը: Երբ Հրայր Սասուն է անցնում, Նազար առժամանակ զէնքը յանձնում է ու վերադառնում գիւղ: Կռիւները սկսելուն լեռն է գնում, մասնակցում է Գէլիէ-Գուզանի կռիւին, ապա քեռու հետ դաշտ վերադառնում և նրա հետ էլ սպանւում:

ԳԱԼՕ ՄՈՎԱԽԱՆՈՒՄ.—Եղբայր, 70 տարեկան: 15 տարեկան հասակից սկսած մինչև ալեորեղը պարապելիս է եղել հովուութեամբ. իր օրերը անցրել է միշտ բնակութիւններից հեռու լեռներում: Այն օր, երբ առաջին յեղափոխականը յայտնել է Սասունում, նա ամեն կերպ օգնութիւն է արել լեռան հայդուկին: Վերջին կռիւների ատեն քիւրդերը հասնում են և նրա բարձունքներին. նա կուռում է քաջաբար և ինքնիրեն պաշտպանելով՝ անցնում է երկու ժամայ ճանապարհ, այնուհանդերձ քիւրդերը շարունակում են հետապնդել նրան և նա, ազատելու հնարաւորութիւնից ու միջոցներից զրկւած, սպանւում է... Խաղաղ, աշխարհի չարն ու բարին հեռու հովի արիւնն էլ է հոսում...:

ՈՍԿԱՆ ԱՐԱՂՑԻ.—17 տարեկան: Սա 1903 թիւն Մշում ծառայելիս է եղել մի Յոյն բժշկի մօտ: Մի օր գալիս են իր գիւղի ընկերներից մի քանիսը և համոզում նրան՝ վերցնել իր տիրոջ փողերը և իրենց հետ փախչել Սասուն՝ յեղափոխականների մօտ, որ այդ փողով զէնք առնեն և զինւոր դառնան: — Ոսկանի պատանեկան երեւակայութիւնը շուտով խաբւում է և նա ընկերների խորհուրդը գործադրում է. վերցնում է բժշկի 80 լիւրան և փախչում Սասուն: Բժիշկը տեղն ու տեղը իմանում է եղելութիւնը և լուր է ճամբում Հրայրին իր փողերի համար: Հրայրը կանչում, հարցաքննում է Ոսկանին, որ ամբողջապէս խոստովանում է իր խաբւածութիւնը ու անմիջապէս յանձնում է փողերը, որ տիրոջն են ուղարկւում:

Ոսկանը մնաց Սասուն. նրա փափագը գոնէ փոքր չափով գոհացնելու համար, թող տրւեց որ յարաբերութիւն ունենայ զինւորների հետ: Կռիւների ժամանակ թէև իբրեւ կուռ մասնակցութիւն չունեցաւ, բայց իր բաժին օգնութիւնը արեց կուռղներին՝ ժամանակին փոխադրութիւններ անելով և այլն: Գաշտ իջնելուց յետոյ, մի անգամ, երբ իրանց գիւղից զինւորներին հաց է տանելիս լինում, կառավարական զօրքեր նշմարում են նրան, վրայ տալիս և սպանում: Անփորձ, բայց վառվռուն և անձնէր աշակերտ յեղափոխութեան:

ԿՐՊԷ ՍԷՄԱՆՑԻ.—35 տարեկան, երկարահասակ, ուժեղ և կատաղի կուռղ: Գիւղի իշխաններից մէկն էր. իրենց ցեղի անունն է Կ ա պ ր ց ի կամ Պ օ Ղ կ ն ե ր. բաղկանում է 70 անից, ցրւած Սասունի այս ու այն գիւղերում, և քիւրդերի մօտ, իբրեւ կուռղ ոյժ, մեծ անուն ունի: Կրպէն եղբայրն է յայտնի Գրգօի, որին կառավարութիւնը 10 տարի առաջ խաբեբայութեամբ բանտարկեց. Պիթլիսի մէջ և քիչ ժամանակ վերջ խեղդել տւեց:

Շատ անգամ առանձինն յաջող ընդհարումներ է ունեցել քիւրդերի հետ: Մօտ տարիներումս Հաջի-Ջահվար անունով մի քիւրդ աղա Սէմալ է գալիս և կառավարութեանը կասկածելի ճանչցած երկու երիտասարդներ բռնում է ու տանում: Այդ ատեն գիւղացիները դաշտում աշխատելիս են լինում: Կրպէն մի քանի ընկերներով Ջահվարի վրայ է յարձակւում և մի փոքր կուռից յետոյ խլում է ձերբակալւածներին:

Մասնակցում է Լաճրկանցիքի և Սէմալի կռիւներին: Վերջին կուռ ժամանակ սպանւում է Հրայրի հետ միասին:

ԱՍՏՈՒՐ ՄՈՎԱՆՑԻ.—26 տարեկան, բարձրահասակ, թիկնաւէտ, ծաղկատար և խոշոր դիմագծերով: Գաշնակցութեան ամենալաւ զինւորներից մինն է եղել: Իր ոյժի մասին մի գաղափար տալու համար ընկերները պատմում են, որ կատակի ժամանակ իրենցից մէկին կամ միւսին ամենայն դիւրութեամբ մէկ ձեռքով բռնում, վեր էր բարձրացնում կամ նետում:

Սպանեց Կծվակի կուռում:

ԳԻՐՕ՝ ԱԼԻԱՆՑԻ.—20 տարեկան, ամուսնացած, գիւղի մէջ յայտնի իր քաջասրտութեամբ: Մի քանի անգամ մասնաւոր կռիւներ է ունեցել քիւրդերի դէմ: Շէնքի կուռին, չը նայելով որ ձեռքում ունեցածը մի չախմախի հրացան էր, այնուհանդերձ թիւրք ձիաւոր զինւորների դէմ ամենից աւելի խիզախողներիցն էր. սպանեց այդ նոյն կուռի մէջ: Ականատեսները պատմում են, որ նրա սպանելուն ներկայ են լինում նաև մայրն ու եղբայրը. վերջինս, եղբայրական սիրուց տուրած, աճապարում է նրա դիակը վերցնելու, բայց մայրը մի կողմ է հրում նրան՝ ասելով. «Մեռածը թո՛ղ դրա համար յետոյ էլ կարելի է հոգալ, դու վրէժ լուծել աշխատիր...»:

ԽԱՅԻԿ՝ ԳԻԼԻԷ-ԳՈՒԶԱՆՑԻ.—Ռէս թաթօի տղան, 18 տարեկան, շէկ, միջահասակ: Գեռ շատ կանուխից ուզում էր հայդուկ դառնալ, բայց հասակի փոքրութեան պատճառով մերժում էին իր խնդիրը: Սպանեցաւ Կուռղիկի մօտ թիւրքերի դէմ տեղի ունեցած մի ընդհարման մէջ:

ՄԻԽԹԱՐ ԿՈՒՐԱՎՑԻ.—21 տարեկան, ամուսնացած: Գեռու պատրաստած յեղափոխականներից մինն էր: Երբ լեռնից կամաւորներին հրաւեր եկաւ, վերցրեց սեփական փողով գնած հրացանը և ուրիշ ընկերների հետ՝ Սասուն բարձրացաւ: Նահանջի ժամանակ՝ քոփի կուռի մէջ նահատակեց:

ԱՐԻՕ ԴԱՆՕ.—Հայրենիքի ազատագրութեան գործի համար մեր այս նահատակ ընկերների շարքի մէջ, մեզ պարտականութիւն ենք համարում մի քանի տողով յիշատակել և՛ մի սասունցուհու՝ Ըռթօի այն գորովն ու անձնիրութիւնը դէպի Ֆէդայիները, որով արժանի եղաւ սրանց Մ ա յ ր ի կ ը (Դանօ) կոչւելուն:

Ըռթօն մի այրի կին էր, գրեթէ 70 տարեկան, զրկւած միանգամայն երկու աչքերից. ունէր 5 տղայ և 3 աղջիկ զաւակ, որոնցից մի տղան և մի աղջիկը խուլ ու համր էին: Իրենց տունը գտնւում էր Գէլիէ-Գուզանի Միխթար թաղում: Բնութեամբ լինելով բարեպաշտ և հիւրասէր՝ նա խիստ գորովալիւ էր մասնաւորապէս մայրերին կորցրած Մեծ Մօր փնտռելու ելն ողներին: Իր ամուսին Աւօից ևս, նրա մահւան ժամանակ, ստացել էր մանաւանդ հետեւեալ կտակը,—չը խնայել ամեն կերպ պաշտպանութիւն և օգնութիւն Ֆէդայիներին: Սասուն հաւաքւած մեր զինւորներից ո՛րն է որ անծանօթ է Դանօին կամ կարող է մոռանալ նրա յիշատակը: Շատ քիչ անգամ էր լինում որ նա առանց Ֆէդայիների սեղան նստէր: Իսկ երբ սրանք ներկայ էին լինում, մարդ կարող էր շփոթել թէ ո՛րն է տանտէրը և ո՛րը հիւր. բոլորը կարծես նոյն տան անդամները լինէին, միեւնոյն մօր

զաւակները: Երբ զինւորները մեկնելիս էին լինում, նա միշտ լաց էր լինում և շատ խնդրում, որ գոնէ շուտով վերադառնան: Այնքան էր ընտելացել բոլորին, որ իւրաքանչիւրին ձայնից ճանաչում էր:

Պատահում էր որ զինւորները հեռւից իջնում էին դէպի մօտակայք, այն ատեն նա իր տղաներին էր դիմում այս խօսքերով. «Օ՛, մալավէք, կըսին տղէք ըկել են, ջամբրուկ մի քեատ ու մատ, սիր ընէ, թացան տարէք, գացէք մըտ տղէք, ի՞նչ նստըր իք. մալավա՛, ծպացէք...»:—Իր զաւակներից մի տղան մշտական զինւոր էր դարձրել, որ շրջում էր խմբերի հետ. իսկ ուրիշ երկուքը տեղական զինւորների կարգումն էին:

Յիշենք այստեղ իր կեանքի վերջին օրերից մի անկողնու, որ բացատրում է թէ ի՞նչ էր զգում նա այդ ատենները: Երբ կռիւները կամաց-կամաց փոխադրւեցան աւելի հեռուներից դէպի Գէլիէ-Գուզանի շրջակայքը, նա բաշտել էր մի պուրակի մէջ և այնտեղ էր անցկացնում իր ժամերը: Պէտք է երեւակայել թէ սրտի ի՞նչպիսի տրոփւնում էր ականջ կախում պարբերաբար իրեն մօտեցող հարսների կամ զինւորների բալլերի ձայնին, ի՞նչպէս ականջով լսւում էր ամեն մի պատմածք կռիւների ընթացքի մասին, ի՞նչպէս ուրախանում, ի՞նչպէս էր յուզւում ու աղօթում...

Մի օր երբ իր առանձնութեան մէջ նստած՝ հետեւելիս է լինում հեռւում որոտացող հրացանների ձայնին, իր քովի թիփերի միջից լսում է մի երեխայի ձայն, որը հետզհետէ աւելի է մօտենում, մինչև որ մի չորս տարեկան երեխայ իր դիմացն է կանգնում: Նա իր մայրն էր փնտրում, որ իրեն պուրակի մէջ թողնելով՝ գնացել էր զինւորների համար պաշար տանելու և որ ուշացել էր և որ շատ ուշացաւ... Է՛հ, մայրը պատրաստ էր արդէն. Ընթոն դրաւ նրան իր ծնկների վրայ ու սկսեց փայփայել երեխային, որ նոյնպէս կարիք էր զգում ընկերոջ, մի կենդանի շունչի...

Երեկոյեան կողմ նրա մօտ են գալիս երկու զինւորներ, իրեն տեղափոխելու համար: Վեր է կենում Ընթոն և միևնոյն ատեն ետևից բաշ տալիս անտէր երեխային: «Ի՞նչ ես ետևիցդ բաշ տալիս այդ երեխային, նկատում են նրան, թո՛ղ դրան այստեղ, մայրը ուր որ է կը գայ, կը վերցնի» — առհասարակ նման դէպքեր պատահում են — «Է՛հ լա՛ւ, ընչի իմալ կըսիք, հիմի Աստուած կըրակ կ'արկէ մըր վրայ, իս դէդի կը պըհէմ, որ Աստուած տեսնի ու զձրզ անփութ լինի»:

Գէլիէ-Գուզանի կուլից վերջ փոխադրւում է Կըռը-Հիկ, ուր վրայ են տալիս քիւրդերը: Սրանց և Ընթոի հետ եղողների միջև տեղի է ունենում խիստ կռիւ: Այստեղ սպանւում է Ընթոն, և Գուբօի արիւնն էլ խառնւում է սիրած զինւորների արեան...

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Գուժայի պատգամաւորական ընտրութիւնների առթիւ վարած պայքարում Դաշնակցականները յաղթանակ են տարել Զանգեզուրի, Շուշու, Ղազախի, Բօրչալուի, Ախալքալաքի, Կաղզանի, Գանձակի, Սուրմալուի, Էջմիածնի, Նոր-Բայազետի ու Ալեքսանդրապոլի գաւառներում և Ալեքսանդրապոլ, Երևան, Գորիս, Կաղզան, Ախալքալաք ու Ախալցխա քաղաքներում:

Թիւրքական «Հիւսէյտա» փոխադրանաւը, 290 զօրքով փետր. 12-ին, իրիկան ժամը 8-ին, կը մտնէր Սիւէզի ջրանցքը: 24 քիլոմետր հեռավորութեան վրայ չորս զինւորներ ջուրը նետւեցան և լողալով Արիսուն հասան: 13-ին, չորեքշաբթի առաւօտ, 34-էն մինչև 44 մետր հեռավորութեամբ 170 մարդիկ իրենց կարգին դասալիք եղան: Նաւի մէջ մնացած զօրքը անոնց վրայ կրակելով՝ հինգ հոգի սպանեցին: Միւսները յաջողեցան լողալով յամաք հասնել և փախչել:

Պէյրութի մէջ մահամտական ամբօխ վերջերս գրգռւած է տեղացի քրիստոնեաներու և տարներու դէմ՝ առանց յայտնի պատճառի: Թէ քաղաքի և թէ շրջականերու մէջ յարձակումներ և մինչև իսկ սպանութիւններ անպակաս են: Երկու Զուլիեբերայիներ յարձակում կրելով դանակածներ են: Ռուս ճամբորդ մը փողոցի վրայ, առանց պատճառի, դանակի հարւած ստացած է կռնակէն:

Ֆրանսական և Գերմանական դեսպաններու գումաներ-կայացուցած խիստ բողբոսներու վրայ երկու Զուլիեբերայիներու դէմ յարձակումները ձեռնարկւած և պատժւած են:

Այսպիսի դէպքեր տանտեակներով կը հաշւին: Ոստիկանութիւնը անտարբեր է և մինչև իսկ մեղսակից: Ոստիկանապետը շարադարձները կը քաջալերէ և մինչև իսկ կը պաշտպանէ: Վալիին, որ ազդեցիկ մարդու համբան ունի, անցած կ'երեւի նոյնպէս ֆանատիկներու կողմը. կացու-թիւնը հետզհետէ տաքնապալի կը դառնայ: Հիւպատոսները խորհրդակցելով տեղեկագրած են իրենց դեսպաններուն և հրահանգի կը սպասեն:

Իսկ վերջին պահուն Վալիին հեռագրած է Պօլիս, որ մահամտականներն ու քրիստոնեաները կը զինւին՝ իրարու հետ կռւելու գիտաւորութեամբ և խնդրած է հրահանգներ: Վալիի կարծիքով այս գործի մէջ Անգլիան մատ ունի:

Պօլսոյ մէջ օրւան դէպքն է պալատի լրտեսապետ ֆէհիմ փաշայի Պրուսա աքսորւիլը: Սա այն ֆէհիմն է, որ երկար տարիներ թրքական մայրաքաղաքի պատուհասը դարձած և իր չարագործութիւնները վաղուց չափն անցած էին, բայց և այնպէս իբրեւ կուրօքն ծառայող Համիտի՝ անոր անոսման վտահայտութիւնը գրաւած և ազատ քարտ ստացել էր իր ուզածը կատարելու: Իբրեւ պալատի ոչ թէ իր չարագործութիւններու, որոնց համար ընդհակառակը միշտ կը վաշտատուէր, այլ Գերմանական շահերու զպէլու յիմարութեան, որը դարձաւ Գերման դեսպանի համար անձնական արժանապատուութեան խնդիր մը: Որչափ ալ Պօլսէն ստացւած տեղեկութիւններ մօտ 200-ի բարձրացնեն անոր չարագործութեանց թիւը, բայց և այնպէս վրաստահ ըլլալու է, որ Սուլթանը իրեն կայր հաւատարմութեամբ ծառայողները շուտ չ'մոռնար. հետեւեալը այս աքսորումը պէտք է նկատել ակամայ զիջում մը բարեկամ Գերմանիայ, և ֆէհիմի համար՝ զբոսական ճամբորդութիւն մը դէպի Թրքական նախկին մայրաքաղաքը:

Միացեալ-Նահանգներու Պօլսոյ դեսպանը խիստ դիմաւորներ ըրած է Գրան, որ Թիւրքոյ մէջ գտնուող ամերիկեան վարժարաններ օրինաւոր ճանչցին և դպրոցներու շէնքերուն և կալածքներուն պաշտօնաթղթերը կանոնաւորին, մի բան որ թրքական կառավարութիւնը երկու տարիէ ի վեր խոտացած է: Գործը դեռ առանց ծայրա-յեղութեան մղելու, դեսպանը աչքի առաջ ունի այն օգուտները, որ ֆրանսիան ձեռք բերաւ Միտիլիի նաւային ցոյցը սարքելով, և կը պնդէ, որ պէտք է Միացեալ-Նահանգներուն համար ևս ճանչցին այն բոլոր իրաւունքները, ինչ որ կը վայելէ ամենէն նպատաստուորեալ պետութիւն մը:

Նոր Գուժան կազմող 524 պատգամաւորներից մինչև փետրուար 25-ի գիշերը բնորւած են 462, որոնք բոտ ուղղութիւնների հետեւեալ պատկերն են ներկայացնում. միապետականներ՝ 89, որից 31-ը իսկական միապետականներ և

58 զանազան աշակողմաններ: Զափաւորներ՝ 43, որից 22-ը հոկտեմբերեաններ: Զախակողմաններ՝ 285, որից 29-ը առաջագիմականներ, 74-ը կազմաններ, 30-ը բանւորականներ և 90-ը զանազան ձախակողմաններ:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

Մ. Դ. ի Կ. Կոմիտէ

Կոմիտէ նոյ. 10. 70, Որբ նոյ. 2. 25, Զարեանոյ դէկտ. 3. 60, Փայտակարան դէկտ. 4. 55, Սալմաստ դէկտ. 4. 5, Կարմիր աղբիւր նոյ. դէկտ. 5. 20, Արարատ փետրուար 6. 25, նոյն փետր. 5, Լարագոյ յուն. մայիս 37. 50, Սաւուր յուն. մայիս 28, Սաւա յուն. մայիս 40, Վէննայ յուն. մայիս 43. 50, Վախկոն յուն. մայիս 22, Տէր սերիա յուն. մայիս 48, Երկչոն յուն. մայիս 25. 50, Համարձակ յուն. մայիս 24. 50, Լսում եմ յուն. մայիս 18, Կուզեմ յուն. փետր. 8, Պաշտմ յուն. մայիս 5, Վսակ սեպ. հոկ. 18, Հիւսիսափայլ հոկ. դէկ. 6. 80, Օր- Հայունեաց նոյ. դէկ. 6. 20, յուն. 2-30, Կոմիտէ դէկ. յուն. 21. 40, օր. Կոյս նոյ. դէկ. 11. 30, Սլաֆ նոյ. դէկ. 12, Մասն. անգամ. նոյ. դէկ. Ս. Ս. Ս. յուն. 10, Գովլաք փետր. 5, Եկ. Կեմ-ից յուն. փետր. 2, Եղբ. Գ-ից դէկ. փետր. 150, Յակովբից փետր. 3, Բաղդակից յուն. փետր. 6, Տիկ. Կիմից փետր. 10, Ս. Հարութից մինչեւ յուն. մայիս 5: Հետեւեալ խումբերից՝ Սարսափ 11, Ասոյ 30, Ման Ազատութիւն 5, Ասոյ 6, Ասոյ 2, 87 Աղասի 1. 10, Շաֆ. Յակ. Բագ. Կարչո Արե. 5, Իւլի. Բ-ից 5, Կիկ. Կեմ-ից 3. 20, Սար Եւ խաչ. 6. 12, Գ. Աս. 5, Կիկ. 15, 1. Շուշանիկ վիճակ 3, 8 մ. խ. վիճակից 24, Մի խմ. օրորոցներ 10, 10:

Ընդամենը 1,215 բուր. 25 կոպ:

1906 Մարտի հաշիւ:

Զարեանոյ յուն. փետր. 6 բուր. Շէնիկ յուն. փետր. 9, Փայտակարան յուն. փետր. 5. 75, Սալմաստ յուն. փետր. 6. 15, Արարատեան փետր. 2. 95, Ուրաշեղի Ա 1905 հաշիւ 12. 50, նոյն Բ 12. 50, Նեմուր նոյն 33. 40, Յաւաջ յուն. փետր. 2. 75, 3 մ. խ. համար 21 յուն. փետր. 3. 65, համար 22 յուն. փետր. 5. 5, համար 23 փետր. 2. 35, համար 24 փետր. 1. 5, համար 25 փետր. 2. 75, համար 26 փետր. 2. 5, 1 մ. խ. համար 8 նոյ. յուն. 4, համար 9 նոյ. 7, համար օժ. ան. Նաժ-ից նոյ. յուն. 3, համար 9 օժ. ան. Հաղ-ից նոյ. յուն. 9, համար 9 օժ. ան. Շաֆ-ից սեպ. հոկ. նոյ. 1. 50, 1 մ. խ. համար 7 նոյ. յուն. 9. 5, Արձագան 1 | 10 յուն. 11. 50, համար 281 Համբից փետր. 18, համար 272 Յաւաջ նոյ. դէկ. 14, համար 273 Դիւմի նոյ. դէկ. 14, համար 277, Վասպուրական դէկ. յուն. 15, համար 279-Զարդախ դէկ. յուն. 6. 20, համար 280 Գիւմի դէկ. 3. 50, համար 272 Կալմակ դէկ. 11. 65, համար 271 ա- Կարափ յուն. փետր. 4. 40, համար 274 Մասիս դէկ. յուն. 10. 60, համար 275 Կալսասն դէկ. 3, 126 Ոսկի. օժ. ա. Ժայռ-ից փետր. 3, համար 172 յուն. 5, Կրակ յուն. 5. 10, Մովսէս յուն. 4, Մերո-փաւա յուն. 4, Մեակ յուն. 4, Ոսկի յուն. 9. 75, Արաւլոյս յուն. 4, Կարիշ յուն. 4 Լոյս յուն. 7. 50, Թորգոմ յուն. 5. 50, Վսակ յուն. 10, Հոյագործ յուն. 6. 50, Հանգակ յուն. 8. 50, Մանկալ յուն. 5. 20, հան յուն. փետր. 25. 40, համար 213 սեպ. 3. 50, համար 214 օգոստ. 11, Ոսկի օժ. ա. Կար-ից հոկ. նոյ. դէկ. 3, Փրնչի դէկտ. 10. 50, Մեղաւոր սեպ. 8, օժ. յուն. յուն. օգոստ. 3, համար 19 օգոստ. 3. 80, համար 20 հոկ. 2. 65, Մովի յուն. 6. 50, համար 16 մինչեւ յուն. հաշիւ 9. 59, համար 14 յուն. փետր. 5. 70, համար 11 յուն. 2. 85, համար 18 հոկ. 1. 90, 1 մ. խ. 1 | 10 յուն. փետր. 9. 30, համար 4 յուն. 4, Ջէրմոն նոյ. յուն. 2, Փոքր Հայկ հոկ. յուն. 14, Սարէկ հոկ. յուն. 15, Գեմակ դէկ. փետր. 35. 50, Հերոս նոյ. դէկ. 13. 50, Օր. քաղցած Կալմ. դէկ. 2. 70, Թորգոմ հոկ. յուն. 14. 60, Աղբերակ հոկ. յուն. 5, համար 63 Հանգակ յուն. 9. 50, Աղ յուն. 4, Կրակ յուն. 9, Բողոք յուն. 3, Սոխակ յուն. 5. 30, Փրիտուր յուն. 5, Ախուրեան յուն. 12. 50, Բարձր յուն. 7. 50, Մասիս յուն. 5. 40, Իրադիկ յուն. 6. 50, Աղաւնի յուն. 5. 50, Երկաթ յուն. 3. 30, Արաւ յուն. 6. 20, Միւր-թիւն յուն. 2. 60, Գեմ յուն. 5. 70, Անճիւն յուն. 3. 50, համար 205 յուն. 7, համար 201 յուն. 9. 50, համար 202 յուն. 8. 50, համար 203 յուն. 6. 50, համար 204 յուն. 5. 40, Հրաբուխ փետր. 5, Մոմակ փետր. 3, համար 11 փետր. 2. 85, համար 13 փետր. 3. 70, համար 15 փետր. 2. 85, Արմուիկ Եւ նոյ. փետր. 48, Կուա օգոստ. 33, Որոտում դէկ. յուն. 21, Կուս յուն. 71, Ասոյ մարտ 11, համար 7 փետր. 6. Զանգակ դէկ. 9. 50, Սլաֆ յուն. մարտ. 15, Կան. Արձագան մարտ 5. 20, համար 37 հոկ. փետր. 17. 20, Ռազմիկ յուն. փետր. 8, Արաւ յուն. փետր. 5. 20. Մամիկոնեան մարտ 5, օժ. Ռուս յուն.

6. 50, օժ. Սարսափ դէկ. 6. 95, օժ. Ռաճի հոկ. դէկ. 12, Երկունք նոյ. դէկ. 7. 40, համար 68 օժ. յուն. 6, 50, Թախաբուխ դէկ. 28, Արձագան 2 | 10 յուն. փետր. 12, Բաղդակից մարտ 3, Գ. Մա-ի սասն նոյ. դէկ. 5. 50, նոյն յուն. փետր. 7. 50, 8. Ան-ի յուն. փետր. 3. համար 6 նոյ. մարտ 8: Նւերներ համար 7. 5. 15, Ման կամ ազատութիւն 5, 1 բան. խմ. 4. 95, օժ. Տիգրանից Եւ Կարչից 8, համար 8 2. 40: Երկայքներից Օր. Լալար 33. 15, 6 մ. խ. 39. 40, 30 մ. խ. յարաջի 120: Մասնաւոր անդամներից՝ 02 յուն. մարտ 7, Գով-ից մարտ 5, Յակ. Մկ-ից օգոստ. փետր. 6, Ս. Ս. Ս-ից փետր. 10, Ս. Մար. փետր. 5, Յակովբից մարտ 3, Անաւ. Նիկ-ից նոյ. փետր. 11, Բագրատեան Փ. միանուազ 1906 թիւ վն 2. 50, Մ. Սարգ-ից ինքնապաշտպանութեան գործի համար 3, Մանուարից նոյ. դէկ. 10, Մաւահառից նոյ. դէկ. 10, Սեւիայի ջալ-լից նոյ. դէկ. 20, Գովից նոյ. յուն. 45. 50, Շվարցից նոյ. յուն. 15, Վանառականից նոյ. յուն. 15, Խալիչայից նոյ. յուն. 6, Առեւտուրից նոյ. դէկ. 6, Զիթից նոյ. 3, Ծաղիկից նոյ. յուն. 9, Ծիծեռնակից նոյ. յուն. 6, Զարայից նոյ. դէկ. 6, Առիւծից նոյ. 3, Կեանից նոյ. 1, Գե-որգից նոյ. դէկ. 6, Պաղվալից նոյ. յուն. 9, Վանառական նոյ. 2, Կը-րիչից նոյ. դէկ. 6, Արեւի Սահարից նոյ. դէկ. 4, Կաս-ից նոյ. յուն. 6, Ալցիից նոյ. յուն. 30, Տէր-Տէրեանից նոյ. 2. Սոլ. Վլա-ից նոյ. 2, Ար. Պ-ից նոյ. 2, Խալսից նոյ. 3, Աղայից նոյ. 2, Զրագից հոկ. նոյ. 6, Գանձակից նոյ. 3, Սամարից նոյ. 2, Մասիսից նոյ. դէկ. 4, Զուրա-չուց նոյ. յուն. 3, Սանդրոյից նոյ. յուն. 3, Ծասուր նոյ. 5, Պողոս Կար-ից դէկ. յուն. 2, Պէլո դէկ. յուն. 2, Պո-դից նոյ. յուն. 15, Յիւսակից դէկ. յուն. 10, 200 բարձր օժ. օր. Սամսից մարտ 10, 200 բարձր սիկ. Սամարից մարտ 10, Պրեսանտ, Ժորէս, Փաթիլ, Մասիսար, Գուսան, Խունկ, Իգբար, Գորդ, Գեղամ 9, Յար. Օհանջից 3.

Ընդամենը 1674 բուր. 74 կոպ:

1906 Ապրիլի հաշիւ:

Տօգո 6- 70, համար 58 4, Մովի 6- 50, Նիզան պայմանի 2- 20, Եւ 5, Եւ 3- 50, համար 181 10- 50, համար 182 11, համար 183 16, համար 184 14, համար 185 9- 90, համար 186 8- 90, համար 187 11- 50, Տղմուս 19- 50, Եփրատ 3- 50, համար 179 8- 50, Փրնչի 7, Միկասո 23- 50, Արեւի սեւ խաչի 15, Տրակիից 9, Կոմիտէ 6, Արաւլոյս 6- 60, համար 43 4. 55, համար 44 9- 30, համար 45 2- 10, համար 46 1- 50, համար 47 2- 30, 29 մ. խ. համար 283 5- 70, Շու-ւանիկ 22, Եկաս- ճորաբոյս 6, Մերո-Փաւա 4, Մովսէս 4, Սեւան-լիւն 3- 50, Ոսկի 10- 75, Զարայիկ 6, Խրիստափոր 5- 20, Արաւլոյս 3, 50, Արձագան 10- 50, Աւեսիսեան 5- 60, Որբից 2, Հարազատ 2, Ար-աւլոյս մ. խ. 4, Տղմուս 12- 80, օժ. Երկաթ 6, Ռազմիկ 6- 85, Արձագան 5- 70, համար 201 9, համար 202 8, համար 203 6- 50, համար 204 5- 40, Աղ 4, Հրայր 7, Ասոյ խմ. 11- 25, 1 մ. խ. 7- 90, Եւ 6- 40, Եւ 2- 70: Գումար 422- 30: 6 | 10 3- 45, մ. խ. համար 4 1- 20, համար 10 13, Երկունք 12- 70, Եւ 9- 40, Որոտում 14, Եւ 2, Եւ 1- 80, համար 281 Համբից 20, Արձագան 3 | 10 8- 20, Զին-գեր 5- 30, Զվարթ 22- 25, Սպակիրթ 24- 15, Ծաղիկ 9- 5, Պասանի 10- 40, համար 10 30, Պան- Եփրեմից 3, Ա. Ար-ից 5, Երկաթից 3, Ոսկի 3- Զինոն 5, Երկաթ խմբից 56, օժ. խմ. 6- 50, Ծաղիկ 5- 50, համար 3 օժ. խմ. 7- 50, համար 68 խմ. 11, համար 36 մ. խմ. 17, տուգանք Ա- Ար-ից 2, Ար- Յովն-ից 2, Գիւմի խմ. 31- 15, Գալից 20, Համբարձում 10, Խալիլա 4, Թուրքիկ 3- 13, Մոմակ 3, Հրաբուխ 5, Իրաւոր Յար-ից 4, Ս. Մուր-ից 10, սիկիւն Նիւայից 10, Աստապատ Զան- 3- Նեէ 3, Ան- 3, Արն 3, Ին-ից 3, Իսեից 3, Թմոյ-ից 2, Զգա 1, Մանուակ 10, Ար- խմբից 26, Կաս Զալ-ից 3, Անի խմ. 7- 50, Գր- միջ Ն- Կպից 118, Սարգսից 3, Զէյթուն 9- 25, Զախար մուս-ից 19: Գումար 1050, 33:

1906 մայիսի հաշիւ:

Անոր խումբ 9 բուր. 15-րդ մասի խումբ Թորգոմ 5. 50, Երկաթ 4, Մորակ 4.50, Հողագործ 13, Գնդակ 8. 50, Մաճկալ 5.70, Եւ Խան 14. 20, 12 մ. խ. Տիկ. օր. Նոր Ժաղ. 8. 70, Սէր 6. 60, Հայունեաց 5. 50, Արմուիկ 2. 50, 10 մ. խ. Աղբիւր 7. 50, Ծրկաթ 7, 4 մ. խ. Նոմիք 31' 5. 80, Ն. 33' 4. 40, 24 մ. խ. Կալստան 11. 50, Արձագանք 8. Միկալո 10, Աստապատ 21, Բախտակից 3, 15 մ. խ. Վտակ 26, 23 մ. խ. Գիւ-րոս 3. 50, Վասպուրկ. 10, 18 մ. խ. Տղմուս 10. 50, 1 մ. խ. Ն. 10' 5.50, 10 մ. խ. Լեռ 10. 80, Լեռանց 9. 50, Հերոս 14. 60, 13 մ. խ. Ծարպիկ 6, Մամիկոնեան խմ. 9, Զարկ 6, Լոյս 5. 25, 1 մ. խ. Տաս 3. 75, Ն. 6' 1. 50, 3 մ. խ. Ն. 21' 2. 50, Ն. 22' 3. 25, Ն. 23' 4. 70, Ն. 24' 7. 75, 9 մ. խ. Ն. 83' 4, Ն. 81' 2. 50, Ն. 84' 4. 90, 4 մ. խ. Ն. 31' 6. 16, Ն. 32' 12. 16, Ն. 33' 10. 16, Ն. 34' 6. 91, Ն. 35' 4. 91, 6 մ. խ. Հասար 12, 9 մ. խ. Հրաբուխ 6. 40, Ժայռ 8. 20, Կոմիտէ 10, Արձագանք 3. 80, Ազատա-միտ 6. 35, Աղասի 2, Որբ 2, Փայլակ 4, 7 մ. խ. Անյայտ խմ. 8, 29 մ. խ. Ն. 285' 9. 5, 26 մ. խ. Տիգրանակերտ 4, Արագած 4, Ալի փաշա 8.

